1931-1944թթ. Վ.Համբարձումյանն աշխատել է Լենինգրադի համալսարանում որպես դոցենտ, պրոֆեսոր, ապա՝ իր իսկ հիմնադրած՝ ԽՍՀՄ-ում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1940-ից՝ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր:

1943թ. Հ. Օրբելու և Վ. Համբարձումյանի ջանքերով Երևանում հիմնադրվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան: Վ. Համբարձումյանը դարձավ նրա հիմնադիր անդամներից մեկը և առաջին փոխնախագահը:

1947թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ նախագահ և շուրջ կես դար ղեկավարել այն:

1946թ. Վ. Համբարձումյանը հիմնադրել է ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնը և Բյուրականի աստղադիտարանը, որտեղ կատարված հետազոտությունները կանխորոշեցին 20-րդ դարի երկրորդ կեսի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները: Մեծ է նրա վաստակը Հայաստանում ֆիզիկայի ու մաթեմատիկայի զարգացման, բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում հետազոտությունների մակարդակի բարձրացման, նոր, ժամանակակից գիտական ուղղությունների ստեղծման և բարձրորակ մասնագետների պատրաստման գործում: Նա մեծապես նպաստել է Հայաստանում ռադիոէլեկտրոնիկայի, քիմիական, մեքենաշինական, լեռնային արդյունաբերության զարգացմանը:

Համաշխարհային գիտության պատմության մեջ նոր էջ են բացել Վ. Համբարձումյանի ներդրումները տեսական աստղաֆիզիկայի, աստղերի և միգամածությունների ֆիզիկայի, աստղային դինամիկայի, արտագալակտիկական աստղագիտության, աստղերի և գալակտիկաների էվոլյուցիայի հետազոտության բնագավառում: Մի շարք սկզբունքներ, այդ թվում ինվարիանտության հակադարձ խնդիրների լուծման սկզբունքը, կոչվում են Վ. Համբարձումյանի անունով: Նա մշակել է աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները, հայտնագործել աստղակույտերի աստիճանական քայքայման երևույթը և առաջադրել աստղակույտերի տարիքի որոշման սկզբունք:

Կրկնակի աստղերի նկատմամբ նոր մեթոդների կիրառման միջոցով հիմնավորել է Գալակտիկայի տարիքի կարճ (հարյուր միլիարդ տարի) սանդղակը: Նրա մշակած շատ գաղափարներ դուրս են եկել աստղաֆիզիկայի շրջանակներից՝ ստանալով ընդհանուր մեթոդաբանական նշանակություն, և խթանել գիտության այլ բնագավառների զարգացումը:

1948-1950թթ. Վ. Համբարձումյանն ընտրվել է Միջազգային աստղագիտական միության փոխնախագահ, 1961-1964թթ.՝ նախագահ, իսկ 1968-1972թթ.՝ գիտական ընկերությունների միջազգային խորհրդի նախագահ:

Վ. Համբարձումյանը հիմնադրել է «Աստղաֆիզիկա» հանդեսը և մինչև 1986թ. եղել նրա գլխավոր խմբագիրը, նաև «Հայկական սովետական հանրագիտարանի» առաջին գլխավոր խմբագիրը և խմբագրական խորհրդի նախագահը:

1948-ից նա Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամ էր, 1958թ.՝ ԽՍՀՄ IIIX գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր:

1993-ից մինչև կյանքի վերջը եղել է ՀՀ ԳԱԱ պատվավոր նախագահ:

Վ. Համբարձումյանի բացառիկ վաստակը համաշխարհային գիտության զարգացման մեջ թե՛ հայրենիքում, թե՛ արտասահմանում գնահատվել է ըստ արժանվույն: 1946թ. և 1950թ. նա արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակների, 1995թ.՝ ՌԴ Պետական մրցանակի: Ընտրվել է ԱՄՆ-ի, Անգլիայի, Բելգիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Իտալիայի, Հունաստանի, Լեհաստանի և այլ երկրների գիտությունների ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ, բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր:

Վ. Համբարձումյանը Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս էր:

Պարգևատրվել է Լենինի 5, Հոկտեմբերյան հեղափոխության, «Պատվո նշան», Աշխատանքային Կարմիր դրոշի 2 շքանշաններով, ԵՊՀ Ոսկե մեդալով: 1994թ.-ին Նրան շնորհվել է նաև ՀՀ Ազգային հերոսի կոչում:

Վ.Համբարձումյանի մահացել է 1996թ. օգոստոսի 12-ին Բյուրականում:

Նրա անվամբ են կոչվում ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը, ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը, «Գիտելիք» ընկերությունը, Երևանի թիվ 12 հանրակրթական դպրոցը:

Նրա բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում

խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի դերը համալսարանական գիտության զարգացման գործում:

Վ. Հ. Համբարձումյանի անվամբ է կոչվել թիվ 1905 փողք մոլորակը, որը հայտնաբերել է Տ. Մ. Սմիռնովան՝ Ղրիմի աստղադիտարանում 1972թ. մայիսի 14-ին: Բյուրականի աստղադիտարանը ևս Համբարձումյանի անունով է կոչվել: Համբարձումյանի ծննդյան օրը՝ սեպտեմբերի 18-ը, Հայաստանի Հանրապետությունում նշվում է որպես Աստղագիտության օր:

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ՄԻՇԵԼ ԼԵԳՐԱՆ.

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԱՎՆ ՈՒ ՀԱՄՈՎԸ ՇԱՏ Է»



Իզուր չեն ասում՝ տաղանդավոր հայր տաղանդավոր է ամեն ինչում: Այս խոսքն ավելի քան համապատասխանում է ֆրանսահայ կոմպոզիտոր, երաժիշտ, դաշնակահար Միշել Լեգրանին՝ ում կյանքի կենսափորձն ապացուցել է՝ տաղանդն այնպիսի բան է, որ բոլորն ունեն դրանից, սակայն ոչ բոլորն են կարողանում օգտվել: «Ամեն առավոտ ես հասկանում եմ, որ ուրիշ եմ, իմ երազանքն է՝ լինել թարմ, նոր և լիահույս».- Միշել Լեգրան:

Ծնունդով ֆրանսիացի, բայց արմատներով հայ՝ լեգենդար կոմպոզիտոր Միշել Լեգրանը ծնվել է 1932 թվականին Ֆրանսիայի սրտում՝ Փարիզում: Մայրը՝ Մարսել-Տեր Միքայելյանը սերել է հայկական ազնվական ընտանիքից: Չնայած քաղաքի ողջ գեղեցկությանը, նրա մանկությունն առանձնանում էր բթությամբ ու մռայլությամբ:

Հասուն տարիներին իր հարցազրույցներից մեկում նա ասել է, որ մանկության տարիներին իր ամենատհաճ հիշողություններն է ունեցել:

Միշելը մեծացել է ստեղծագործ ընտանիքում: Ընտանիքի ղեկավարը երաժշտություն էր ստեղծում, ինչպես նաև նվագախումբը ղեկավարում՝ փարիզյան էստրադային շուկաներից մեկում: Մայրիկը տաղանդավոր երեխաներին սովորեցնում էր դաշնամուր նվագել: Երբ Միշելը շատ փոքր էր, նրա մայրը տղային հայտնեց, որ ինքն ու հայրը բաժանվում են: Կինն ինքը ստիպված է եղել ոտքի կանգնեցնել իր երեխաներին՝ որդուն և դստերը՝ Քրիստիանին: Միշելը վաղաժամ անկախացավ: Նա փորձում էր զբաղեցնել իրեն, որպեսզի ինչ-որ կերպ շեղի իրեն կուտակված խնդիրներից: Քանի որ տանը քիչ խաղալիքներ կային, միակ զվարճանքը դաշնամուր նվագելն

էր: Հանգստյան օրերին Միշելին և Քրիստիանին մեծացրել է իրենց պապը: Միշելը կիրակի օրերին պապի հետ այցելում էր փարիզյան տաճար: Նրանք նաև ավանդույթ ունեին՝ միասին վայելում էին դասական ստեղծագործությունները, որոնք նվագում էին հին գրամոֆոնով:

Ապագա կոմպոզիտորը սովորել է Փարիզի կոնսերվատորիայում և գերազանցությամբ ավարտել է ուսումնական հաստատությունը: Նրա ստեղծագործական ուղին սկսվեց նրանից, որ նա ուղեկցում էր անձամբ Մորիս Շեվալյեին: Մորիսի շնորհիվ երիտասարդ մանեստրոն շրջեց ամբողջ աշխարհը: Նրա երաժշտական կարիերան սկսվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, երաժշտասերների ջերմ ընդունելությունը ոգեշնչել է տաղանդավոր կոմպոզիտորին ու երաժշտին:

50-ականներին Միշել Լեգրանը իրեն դրեց որպես ջազ կատարող: Նա ձայնագրեց առաջին սկավառակը, որը հազեցած էր լավագույն ջազային ստեղծագործություններով:

1954 թվականին նա թողարկել է առաջին ձայնասկավառակը: Հեղինակել է բազմաթիվ հեռուստատեսային հաղորդումներ և երաժշտական սցենարներ: Ավելի շատ հայտնի է շուրջ 200 ֆիլմերի համար գրված երաժշտությամբ: Թողարկել է ավելի քան 100 ձայնասկավառակ: Երեք անգամ արժանացել է «Օսկար», 5 անգամ՝ «Գրեմմի» և «Էմմի», 12 անգամ՝ «Ոսկե գլոբուս» մրցանակների: 2003թ. արժանացել է Ֆրանսիայի «Պատվո լեգիոն» շքանշանի:

Միշել Լեգրանը հիսուն տարի շարունակ սիրել է մի կնոջ: Սակայն, որպեսզի հարազատներին ցավ չպատճառեն, նրանք երդվել են բաժանվել և այլևս երբեք չփնտրել միմյանց: Նա Մաշա Մերիլ Գագարինային հանդիպեց 1964 թվականին՝ Բրազիլիայի կինոփառատոնի օրերին, երբ ֆրանսիական պատվիրակության կազմում մեկնել էր Ռիո դե Ժանեյրո: «Երազանքի գեղեցկուհուն տեսա ծովափին ... և անմիջապես սիրահարվեցի», - պատմում էր Միշել Լեգրանը տարիներ անց:

Այդ պահը դարձավ ճակատագրական: Մեծ

կոմպոզիտորը իր կյանքի սիրուն հանդիպեց ուշ, երբ արդեն ուներ ընտանիք՝ կին և երկու երեխա: Իսկ Մաշան պատրաստվում էր ամուսնանալ իր իտալացի փեսացուի հետ: Այդ պատճառով նրանց սերը մնաց պլատոնական: «Դա պլատոնական սիրավեպ էր, որը հանկարծ բռնկվեց և փոխադարձ համաձայնությամբ ավարտվեց հենց այնտեղ», - ասում էր Մանեստրոն:

Օվկիանոսի պես խոր ու անձայր սիրո ազդեցությամբ Լեգրանը ստեղծեց «Շերբուրգյան հովանոցներ» ֆիլմի անմահ մեղեդիները, որին հաջորդեց հուզիչ «Իմ սրտի հողմաղացները» երգը: Դրանցով նա ամրապնդեց իր դիրքը որպես հանճարեղ երգահան և կինոերաժշտության վարպետ: Քանի դեռ գոյություն ունեն մարդն ու արվեստը, չեն մոռացվի այդ ստեղծագործությունները՝ սիրո մեծ ու տառապալից պատմությունները:

Մաշա Մերիլ Գագարինան ֆրանսիացի տաղանդավոր դերասանուհի և գրող էր: Նա ռուս վտարանդիկնյազ Վլադիմիր Գագարինի դուստրն էր և ծագումով արքայական գերդաստանից: Դրա համար էլ նրան հաճախ կոչում էին արքայադուստր:

Իսկ Միշել Լեգրանը, որպես անկրկնելի երգահան և կինոերաժշտության մեծ վարպետ, արդեն արժանացել էր բազմաթիվ բարձրագույն մրցանակների: Բայց նրա կյանքի ամենամեծ պարգևը, որ տրվեց վերուստ, Մաշա Մերիլ Գագարինան էր՝ նրա սրտի տիրուհին:

2013 թվականին՝ գրեթե հիսուն տարի անց, նրանք կրկին հանդիպեցին: Այդ օրը Մաշան փարիզյան թատրոնում խաղում էր «Մտերիմ հանդիպումներ» ներկայացման մեջ: Կոմպոզիտորը նստել էր դահլիճում՝ բեմից ընդամենը տաս քայլ հեռավորության վրա: Նա հիացած նայում էր իր սիրո իդեալին և արցունքներն՝ անձրևի պես թափվում էին աչքերից....

Ներկայացումից հետո Լեգրանը գնաց կուլիսներ և Մաշային նվիրեց սպիտակ վարդեր,

որոնց թերթիկների վրա կարմիր թանաքով գրել էր «Շերբուրգյան հովանոցների» և «Իմ սրտի հողմաղացների» նոտաները: Այդ մեղեդիները նա գաղտնի նվիրել էր նրան՝ որպես սիրո խորհրդանիշ:

Այժմ երկուսն էլ միայնակ էին, և ավեր երաժիշտը նրա համար պատրաստ էր ամեն ինչի: 2014 թվականին նրանք ամուսնացան: Միասին ապրեցին ընդամենը հինգ տարի, սակայն դրանք դարձան նրանց կյանքի ամենաերջանիկ տարիները:

Ֆրանսահայ կոմպոզիտորը՝ երգահան, դիրիժոր Միշել Լեգրանը, կյանքից հեռացել է 86 տարեկանում՝ 2019 թվականի հունվարի 19-ին: Այդ պահից ի վեր՝ նա վերածվեց լեգենդի: Այնպիսի կինոռեժիսորների հետ, ինչպիսիք են Ժան-Լյուկ Գոդարը, Անյես Վարդան, Օրսոն Ռիելսը՝ Միշել Լեգրանն այժմ հանգչում է մեծագույն կինոկոմպոզիտորների պանթեոնում:

Նա մահացավ երջանիկ, քանի որ իր կյանքի ամենամեծ երազանքը՝ սերը, ի վերջո վերադարձել էր իրեն:

Միշել Լեգրանի մտքերից.

***«Հայաստանը իմ սրտի համար յուրահատուկ երկիր է: Իմ «ես» -ի մի մասը հայ է, սա իմ ամենահետքերը կտրուկ հատվածն է»:

***«Ամեն անգամ Հայաստան գալիս առաջին միտքը, որ ծագում է գլխումս, այն է, որ իմ պապերի հողում եմ և, ընդհանուր առմամբ, ինձ պատում է խոր հարգանքի զգացում: Ընդհանրապես, այդ օրերին դառնում եմ առավել զգացմունքային: Մինչև թուրքերի կողմից իրականացրած կոտորածները, մեր ցեղից Հայաստանում վերջինս ապրել է իմ պապը, ով այնուհետև փախել է Ֆրանսիա և ծնունդ տվել իմ մորը, այնուհետև հայությունը տարածվել է իմ և իմ երեխաների միջոցով: Ամեն անգամ Հայաստան գալով՝ ես կրկին վերապրում եմ այդ ամենը»:

***«Հայաստանը մի երկիր է, որ շատ է ճնշվել, ապրել է բազմաթիվ դրամատիկ պահեր, ողբերգություններ, սակայն ուրախալի է, որ հիմա վերածնվում է»:

***«...կարևորը մարդու ներքին աշխարհն է ու սիրտը, կարևորը քո սեփական գործում միշտ առաջընթաց արձանագրելն է: Պետք չէ մոռանալ նաև այն հանգամանքի մասին, որ անհրաժեշտ է աշխատել սիրով»:

***«Տարիքը զարդարանք չէ: Բայց իրականում տարիքս չեմ զգում: Ես երիտասարդ եմ.. »:

***«Երաժշտությունն է ինձ նվիրել երջանկության բանալին: Ես կրքոտ երաժիշտ եմ, դրա համար էլ շատ եմ ստեղծագործում, խանդավառված եմ մշտապես»:

***«Ոչնչի մասին չեմ ավստում: Արդեն շատ ուշ է ինչ-որ բան փոխելու համար: Ես ընդհանրապես հետ չեմ նայում, անցյալն ինձ չի հետաքրքրում, քանի որ այն ինչ այսօր է, վաղը կդառնա երեկ»:

***«Ֆրանսիայի հայերը մշտապես պայքարել են, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչվի Ֆրանսիայում: Պայքարել են նաև, որ իրենց երկիրը (Նկատի ունի Հայաստանը) միշտ շահած դուրս գա, ավելի ամուր և ուժեղ լինի: Աշխարհի բոլոր հայերը սկզբունքորեն պայքարում են, որ Ցեղասպանությունը ճանաչվի, ինչպես Շոայի (<ոլորոստ) դեպքում էր»:



ԳԱՅԱՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ПО СЛЕДАМ ВОЕННОГО ВРЕМЕНИ: ДВА БОЕВЫХ ТОВАРИЩА – В. А. МУРАДЯН И Г. А. СЕРЕДА

Бесценная книга (справедливости ради отметим, рекордный тираж – 1000 экземпляров) «Голоса Бессмертия», дарованная автором Е. А. Шуваевой-Петросян, вызвала желание обратиться к мемуарной прозе фронтовиков. Мемуарный жанр о священной войне представляет собой ценные исторические и литературные произведения, основанные на личном опыте. Именно в них запечатлены имена храбрых бойцов, смелых воинов разных национальностей, в том числе и доблестных армян. В связи с этим в полной мере можно согласиться создателем бестселлерной книги Е. А. Шуваевой, что «во время войны все были едины, невзирая на различия по национальности или религии».

Великая Отечественная война была не только драматичным, но и героическим периодом в истории Советского Союза. О фронтовом пути, о бес-смертных подвигах воинов-украинцев, мордвы, киргизов, туркменов, армян и воинах других национальностей, которые храбро защищали русскую землю рассказывается в книге «Первый салют Родины» Г. А. Середы (1921 г., с. Матвеевка Украинская ССР – 2008 г., г. Саранск, Республика Мордовия). В свои 22 года уже командовал

полком. Сражался на Брянском, Воро-нежском, Степном и Втором Украинском фронтах. В 1958–64 гг. – начальник штаба 43-й стрелковой дивизии Приволжского ВО (г. Куйбышев); в 1964–72 гг. – военком МАССР. В 1972–85 гг. – заместитель генерального директора по ГО и режиму Саранского электролампового завода. Депутат ВС МАССР (1967 г.). Член Совета ветеранов войны Мордовии (1985–2000 гг.).

В исторической летописи Середы запечатлен истинный воин, армянин, политрук роты, военный комиссар полка, заместитель начальника и начальник политотдела дивизии – Виктор Асланович Мурадян: «Ночью с 12 на 13 июля в распоряжение полка прорвались с группой дивизионных разведчиков заместитель начальника политотдела дивизии майор Виктор Асланович Мурадян и начальник разведки дивизии майор Федор Данилович Магер и прибыли ко мне на наблюдательный пункт. Что может быть в жизни доро-же, чем встреча близких фронтовых друзей в экстремальной обстановке боя?! Виктора Аслановича я знал с начала войны. Он был самым молодым комиссаром полка Брянского и Воронежского фронтов. В январе 1942 г. я принял батальон в 636-м стрелковом полку, где

комиссаром полка был В. А. Мурадян. Он очень многому меня научил. Вот такие мужественные офицеры появились ночью на наблюдательном пункте. Мы крепко обнялись» (с. 110).

Благодаря исторической книге вчерашнего фронтовика, участника Г. А. Середы в полной картине описывается ход войны, боевой дух однополчан: «Надо отметить, что наши воины в период Великой Отечественной войны значительно превосходили по боевым возможностям и морально-боевой стойкости фашистского солдата-захватчика. Об этом могу судить по гвардейцам своей дивизии. Боевой дух постоянно поддерживали комиссары:



Командир 267-го гвардейского стрелкового полка гвардии подполковник Г. А. Середа (1943 г.)



Военный комиссар 636-го стрелкового полка батальонный комиссар В. А. Мурадян (1942 г.)

Ф. И. Олейник, П. Х. Гордиенко, И. Я. Лысоиван, И. Г. Кемкин, В. А. Мурадян, И. А. Мордвов, А. К. Пучков и др. Именно это позволило сначала остановить в кровопролитных сражениях, а потом и погнать в наступательных боях кровавого и коварного врага и полностью его разгромить» (с. 14).

Отважного армянина Г. А. Середа запомнил на всю жизнь, он для него был нравственным и политическим учителем: «В 8.00 22 августа в полк прибыл заместитель начальника политотдела дивизии подполковник Виктор Асланович Мурадян. Жгучий брюнет с красивым лицом, всегда с улыбкой на устах, до отчаяния храбрый в критической обстановке боя, он буквально покорял сердца красноармейцев и командиров и пользовался большим уважением и любовью всех гвардейцев. Он очень часто бывал в траншеях и в атакующих цепях (с. 138).

«Он везде успевал, таков был В. А. Мурадян» – пишет Г. А. Середа. – «Встречал майора Мурадяна в окопе, где наблюдал за окраиной Харькова и траншеями, опоясавшими Холодную Гору. Он, улыбаясь, в шутку спросил меня: «Когда товарищ подполковник освободит свое военное училище?». Он побывал в батальонах, а ночью с группой дивизионных разведчиков, проникнув через боевые порядки противника, 23 августа 1943 г. первым водрузил красное знамя на площади им. Дзержинского – на Госпроме. Фотография, сделанная фотокорреспондентом ТАСС, капитаном Черновым,

обошла многие фронтовые и центральные газеты» (с. 138–139).

После Великой Победы фронтовые друзья часто встречались на памятных датах, из одной таких встреч вспоминал Герой Советского Союза, полный кавалеры ордена Славы, военачальник Середа: «При встрече с ветеранами дивизий, с генералом Федоренко и профессором В. А. Мурадяном, начальником политотдела дивизии П. Х. Гордиенко, с подполковником Лысоиваном мы вспоминаем наши встречи с командующим фронтом маршалом И. С. Коневым и рассказываем молодежи о героизме и отваге наших гвардейцев. И мы гордимся тем, что современная молодежь надежно несет службу по защите священных рубежей нашей Родины» (с. 141).

Свой монолог закончу словами карабахского армянина: «Если бы меня, сына Советской Армении, спросили, с чего начинается Родина, то я бы ответил: с площади перед Зимним дворцом, где русские рабочие, революционные солдаты и матросы под руководством ленинской партии в октябре 1917 г. зажгли великое зарево новой жизни. А если бы меня спросили: а где заканчивается Родина, то я не смог бы ответить. Не смог бы потому, что моя Советская Родина стала поистине бескрайней и необъятной, ее идеи не знают границ. Нет масштаба, которым можно измерить дела моей Родины, ее значение, вес и авторитет в мире... Нет такой меры, которой можно измерить дружбу наших

народов. У нас много друзей, и самый большой наш друг тот, с которым мы вместе шли в сражениях и победили ненавистного врага – фашизм!» (В. А. Мурадян).

Т.И. ЯНГАЙКИНА

*Кандидат филологических наук, г.
Саранск, Республика Мордовия (РФ)*



Г. А. Середа второй слева, 2003 г. _военные комиссары

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՎԱՆԻ ԱՂԱՅԱՆՑ

/Խորհրդային հետախուզության լեգենդը/

Գանձակցի հայ հոգևորականի որդուն վիճակված էր բացառիկ դեր խաղալ ոչ միայն սեփական հայրենիքի, այլև որոշ արտասահմանյան երկրների ճակատագրում:



Խորհրդային հետախուզության հիմնադիրներից մեկի՝ ՊԱԿ-ի գեներալ-մայոր Հովհաննես (Իվան) Աղայանցի անունը բաց աղբյուրներում հայտնվել է Խորհրդային Միության հերոս, լեգենդար հետախույզ Գևորգ Վարդանյանի շնորհիվ:

Ի դեպ, Աղայանցը Վարդանյանի առաջին ուսուցիչն է եղել դեռ Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին:

Գևորգ Վարդանյանի հուշերից. «1940 թվականի փետրվարի 4-ին առաջին անգամ գնացի հանդիպելու խորհրդային ռեզիդենտ Հովհաննես Աղայանցի հետ: Նա խիստ և միևնույն ժամանակ բարի ու ջերմ մարդ էր: 1943 թվականին Թեհրանի համաժողովի ժամանակ հենց Աղայանցն էր պետական բարձունքներից ղեկավարում, համակարգում Ստալինի, Ռուզվելտի և Չերչիլի վրա №1 ֆաշիստ դիվերսանտ Սկորցենու հարձակումը կանխելու լրջագույն օպերացիան: Աղայանցին, ով ընդամենը 32 տարեկան էր, ենթարկվում էին 120 խորհրդային օպերատիվ աշխատակիցներ: Նրանք բոլորը գործում էին տարբեր

ռեզիդենտուրաներում, որոնց թիվը պատերազմի տարբեր տարիներին 41-ի էր հասնում...»:

Ի վերուստ հետախույզ, Գեներալ-մայոր Հովհաննես Աղայանցը ծնվել է 1911 թվականի օգոստոսի 28-ին Ելիզավետպոլում (ներկայիս Գանձակ, Գյանջա) հայ քահանայի ընտանիքում:

19 տարեկանում տեղափոխվել է Մոսկվա, որտեղ սկսել է աշխատել ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդին առընթեր Միացյալ պետական քաղաքական վարչության Տնտեսական դիվերսիաների դեմ պայքարի վարչությունում՝ որպես ավագ գործավար:

Բազմաթիվ ունակությունների ու աշխատանքի նկատմամբ ունեցած բարեխիղճ վերաբերմունքի, ինչպես նաև մի քանի օտար լեզուների (ֆրանսերեն, իսպաներեն, պարսկերեն, թուրքերեն, անգլերեն, իտալերեն) իմացության շնորհիվ երիտասարդն արագ առաջխաղացում է ունենում կարիերայում. 1936 թվականին նրան ընդգրկեցին արտաքին հետախուզության մարմիններում, իսկ մեկ տարի անց ուղարկեցին Փարիզի ռեզիդենտուրա օպերատիվ աշխատանքի:

Երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, Աղայանցին Իվան Ավալով կեղծանվան տակ, ուղարկեցին Իրան՝ Թեհրանում Խորհրդային Միության դեսպանատան խորհրդականի կարգավիճակով: Այնտեղ նա ղեկավարում էր նացիստական գործակալական ցանցի բացահայտման և ոչնչացման միջոցառումները, ինչպես նաև համակարգում Իրանի ռեզիդենտական գործունեությունը, մասնավորապես՝ Գևորգ Վարդանյանի «Թեթև հեծելազոր» խումբը:

Հենց Հովհաննես Աղայանցն էր Խորհրդային Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ներխուժումից 72 ժամ առաջ պարզել թշնամու հարձակման հստակ օրն ու նույնիսկ ժամը:

Անկրկնելի հետախույզի ամենափայլուն օպերացիաներից մեկը՝ Թեհրանում «մեծ եռյակի» առաջնորդների վրա իրականացվող մահափորձի ձախողումն էր. Գևորգ Վարդանյանի խմբի օգնությամբ Աղայանցին հաջողվում է բացահայտել «Երկար ցատկ» անվանումով գերմանական դավադրությունը, որի նպատակն էր 1943 թվականի Թեհրանի համաժողովի ժամանակ վերացնել Իոսիֆ Ստալինին, Ուինսթոն Չերչիլին և Ֆրանկլին Ռուզվելտին:

Չնայած «Երկար ցատկ» օպերացիայի կանխումը շատ կարևոր էր, Աղայանցի կարիերայում, բայց այն ավելի նշանակալի չդարձավ, քան առաջադրանքը, ըստ որի, նա պետք է պարզեր, թե գերմանական օկուպացիայի հետ չհաշտված Ֆրանսիայի մի քանի առաջնորդներից ում հետ ԽՍՀՄ-ը կարող է վստահելի հարաբերություններ կառուցել:

Եվ այսպես, 1943 թվականի օգոստոսի 1-ին Ստալինի անձնական հանձնարարությամբ նա Ալժիր մեկնեց ֆրանսիացի գեներալ Շառլ դե Գոլի հետ կապ հաստատելու համար: Առաջադրանքը կատարվել էր, և շուտով Մոսկվայում կայացավ դե Գոլի և Ստալինի հանդիպումը:

«Հովհաննես Աղայանց. Ճանապարհ դեպի պատմություն» (Иван Агамян. Путь в историю) վավերագրական ֆիլմից. - «1944 թվականի դեկտեմբերի 10-ի, Կրեմլ, մի քանի ժամ է ինչ բանակցություններ էին ընթանում, որոնք խախտելով կանոնակարգը, երկարում էին: Բանակցությունների գլխավոր մասնակիցներն էին Ստալինն ու այն ժամանակ քիչ հայտնի գեներալ Շառլ դե Գոլը՝ Ֆրանսիայի ազգային ազատագրական կոմիտեի հիմնադիրը: Ստալինն ու դե Գոլը պայմանագիր են ստորագրում, որը երկար տարիների համար սահմանում է երկրների միջև հետպատերազմյան հարաբերությունները:

Այդ փաստաթղթի շնորհիվ Ֆրանսիան վերադարձնում էր գերտերության իր կարգավիճակը, իսկ գլխավորը՝ հնարավորություն ստանում հաղթող

պետությունների հետ մի դաշինքում հայտնվել: Ով իմանա, ինչ տեղ կզբաղեցներ Ֆրանսիան ժամանակակից քաղաքական ուժերի դասավորվածության մեջ, եթե չլիներ հետախույզության՝ խորհրդային հետախույզության ջանքերը: Այսօր կարելի է նշել այն մարդու անունը, ով իրական ներդրում ունեցավ Ֆրանսիայի հետպատերազմյան ճակատագրում՝ խորհրդային հետախույզ Հովհաննես Իվանի Աղայանց»:

Խորհրդային անկրկնելի հետախույզի արժանիքների մասին շատ է գրվել: Սակայն քչերը գիտեն, որ նման խիստ կարգուկանոնի տեր մարդը շատ զգայուն էր հարազատների և, հատկապես, երեխաների հետ շփումներում:

Դժվար էր պատկերացնել, որ Աղայանցի նման լուրջ մարդը գրպանում միշտ կոնֆետ կունենար: Նրա դուստրը՝ Արփենիկ Աղայանց-Բիկովան, հարցազրույցներից մեկում հիշում է, որ հայրը հազվադեպ էր աշխատանքից շուտ տուն վերադառնում, բայց երբ նա բակ էր մտնում, բոլոր կողմերից նրա մոտ էին վազում երեխաները:

Աղայանցի ծանոթներից քչերը գիտեին, որ նա ծանրագույն վիրահատություն է տարել՝ ապրում էր առանց մի թոքի: Սակայն դա չէր խանգարում նրան ուշադիր լինել իր աշխատակիցների առողջության նկատմամբ: Եթե օգնության կարիք էր լինում, նա չէր մերժում և հիվանդանոց տեղավորում, օգնում ընտանիքներին, հոգ տանում երեխաների մասին:

Հովհաննես Աղայանցի ղեկավարության ներքո աշխատած Արտաքին հետախույզության վետերան, գնդապետ Վիտալի Կորոտկովը, պատմում է, որ լեգենդար հետախույզը «զարմանալի նրբանկատ անձնավորություն էր, որը երբեք ձայնը չէր բարձրացնում»:

«Իվան Իվանովիչը մարդկանց սովորեցնում էր լայնախոհ լինել, չկենտրոնանալ միայն ինչ-որ օպերատիվ խնդիրների վրա: Նա փորձում էր հետևել յուրաքանչյուր աշխատակցի աճին, իր մոտ զրույցի հրավիրում... Նա իր ուրույն վարքագիծն ուներ՝ երբեք ձայնը չէր

բարձրացնում: Երբեք: Կամաց, հանգիստ արտահայտում էր իր մտքերը, սեփական նկատառումները: Ենթակային էլ ուշադիր էր լսում: Քննարկում էր ասածը, փորձում մեղմ ձևով նրա ուշադրությունը հրավիրել թերությունների կամ այն պահերի վրա, որոնք աշխատակիցը հաշվի չի առել:

Աղայանցը զարմանալի նրբանկատ անձնավորություն էր: Նույնիսկ խիստ գնահատական տալով՝ նա կարողանում էր միաժամանակ մատնանշել լուծման ճիշտ ճանապարհը... Օպերատիվ կազմի հետ նման առօրյա հաղորդակցման ձևի շնորհիվ նրան ոչ միայն հարգում էին, այլև իսկապես սիրում: Նա լավ աշխատելու, ենթակաների հետ շփման մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու վառ օրինակ էր:

Նրա ընտանիքը շատ համերաշխ էր: Ինքն ու կինը՝ Ելենա Իլինիչնան, երկու որդի ու մեկ դուստր էին լույս աշխարհ բերել՝ Նիկոլայը, Ալեքսանդրը և Արփենիկը: Նիկոլայը լրագրող դարձավ, Ալեքսանդրը՝ դիվանագետ: Իսկ դուստրը՝ Արփենիկը, իրեն ընտանեկան գործերին նվիրեց:

Հովհաննես Աղայանցը ճանաչում ձեռք բերեց դեռ կենդանության օրոք. նա հետախուզության մեջ հազվադեպ գեներալի կոչում, հայրենիքի բարձրագույն շքանշաններ ստացավ: Բայց, ցավոք, երկար չապրեց: Արագ զարգացող քաղցկեղը 1968 թվականի մայիսի 12-ին խլեց Աղայանցի կյանքը, երբ դեռ չէր լրացել նրա 57 տարին: Հովհաննես Աղայանցը թաղված է Նովոդևիչի գերեզմանատանը, կնոջ կողքին:

Հովհաննես Աղայանցը միայն տաղանդավոր հետախույզ չէր: Նա խորը գիտելիքներով օժտված մարդ էր, տարված էր նկարչությամբ, լավ հասկանում էր գրականությունից: Աղայանցի շնորհիվ հաջողվել է հայրենիք վերադարձնել Պյոտր Կոնչալովսկու շուրջ 50 կտավ, ինչպես նաև կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովի արժեքավոր արխիվը:

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

НОВОЕ СЛОВО В ИСТОРИКО-ПРИКЛЮЧЕНЧЕСКОЙ ПРОЗЕ АРМЕНИИ

15 октября в Объединении ветеранов Армении имени маршала И. Х. Баграмяна состоялась презентация новой книги Елены Асланян «Золото ария». Приветственным словом открыл мероприятие председатель ветеранской организации – Симон Есаян. Провела презентацию – главный редактор журнала «Ветеран» Елена Шуваева.



Действие повести разворачивается в 1942 году на фоне охваченного войной мира и грохота орудий Сталинградской битвы.

«Золото ария» было объявлено победителем фестиваля «Славянское слово» (Болгария) в сентябре 2025 года и удостоено приза «Лучшая историко-приключенческая книга».

Елена Асланян – автор, который обычно пишет о своём времени, о том, что пережила сама или наблюдала у других, создавая через собственное восприятие живой портрет эпохи. Её произведения неизменно отмечают на международных литературных конкурсах, что говорит о глубине и выразительности её стиля. Обращение писательницы к теме Второй мировой войны может удивить лишь на первый взгляд. Елена принадлежит к поколению, рождённому в СССР, воспитанному на истории Победы советского народа и напрямую общавшемуся с молодыми ещё тогда дедушками и бабушками-фронтовиками. Позднее этому поколению пришлось пройти через Афганистан, затем – через Первую Карабахскую войну, а кому-то – и через Вторую.

Поэтому для героя рассказа «Геташен — обратной дороги нет» мерилom чести и мужества становится Майор из советского фильма «Обратной дороги нет». А в романе «Спрессованные в алмазы», трижды побеждавшем на международных конкурсах, молодые герои постоянно вспоминают о пережитом их близкими.

Вероятно, Елене Аслanian захотелось вернуться к самой точке истока понимания философии войны — к осознанию того, что от неё не убежишь и нужно принимать вызовы судьбы с мужеством и достоинством. Писательница нашла форму, позволяющую представить реальные события Второй мировой войны как увлекательную приключенческую повесть, сюжет которой мгновенно захватывает читателя.

Обложку книги, уже появившейся в книжных магазинах Армении, украшает изображение девушки в западноармянском головном уборе, держащей в руках шар, из отбитого фрагмента которого сыплется золото — то самое золото ария, армянское золото. В каждой армянской семье живут предания о зарытых кладах Вана, Диарбекира, Муша, Сасуна. Лицо героини обложки списано с молодой ереванки с эрзерумскими корнями. Иллюстрация создана художницей Заруй Микаелян (Zara Mika), чьи предки были из Игдира, что, вероятно, и сделало образ таким выразительным.

В книгу «Золото ария» включён очерк Елены Аслanian о Давиде Сасунском — как приложение, перекликающееся с сюжетом повести: её герои оказываются в местах, где разворачивались события знаменитого армянского эпоса, и вспоминают об этом с волнением.

На презентации присутствовали представители посольств России и Беларуси, коллеги писательницы, поклонники и представители молодого поколения, чьи прадеды сражались под Сталинградом и в Керчи.

Особенно трогательным стал момент, когда один из гостей принёс фотографии своей матери и бабушки в традиционных эрзерумских нарядах.

Атмосфера мероприятия была очень тёплой — это отметили все выступающие.

Автор передала в дар библиотеке Объединения ветеранов не только свою новинку «Золото ария», но и роман «Спрессованные в алмазы», летопись постсоветской Армении, а также свою первую книгу «Наша жизнь, наша война, наша любовь» (2005), с которой начался её творческий путь.

ԳԵՆԵՐԱԼ — ԼԵՅՏԵՆԱՆՏ ՍՏԵՓԱՆ ԵՂԻՎՅԻ ԳԻՆՈՍՅԱՆ



Վրացական ԽՍՀ Բոգդանովկայի շրջանի Սաթխա գյուղը գտնվում է ցածր բլուրների մեջ, որը հարուստ է ավանդույթներով: Այն շատ հին գյուղ է, որի վկաներն են գյուղում գտնվող ավերակված բերդը, որը գալիս է դարերի խորքից, ինչպես նաև 19-րդ դարի հայկական եկեղեցին:

Այս գյուղում են ծնվել կոլտնտեսականներ Եղիա և Արեգնազ Գինոսյանների հինգ որդիները՝ Ստեփանը, Սահակը, Մաթևոսը, Գուրգենը և Խաչատուրը, որոնք Կարմիր բանակի կազմում մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին:

Հինգ եղբայրներից գեներալ-լեյտենանտ Ստեփան Գինոսյանը ծնվել է 1900 թվականի հոկտեմբերի 27-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 9-ին): Գյուղի տարրական դպրոցն ավարտելուց հետո նրան բախտ վիճակվեց ընդունվելու Ախալքալաքի բարձրագույն ուսումնարանը: 1923թ. Գինոսյանը սովորում է Մոսկվայի համամիութենական կենտգործկոմի անվան զինվորական դպրոցում: 1926թ. նրան փոխադրում են Երևանի հայկական զինվորական դպրոց, որից հետո ուսումը շարունակում է Անդրկովկասյան զինվորական դպրոցում:

Ուսումն ավարտելուց հետո նա անցնում է զինվորական ծառայության որպես վաշտի հրամանատարի օգնական, այնուհետև՝ կուրսանտական վաշտի հրամանատար: 1933թ. գարնանը Գինոսյանը դառնում է Մոսկվայի Մ.Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ֆակուլտետներից մեկի ունկնդիր: Առաջին կարգի դիպլոմով 1936թ. նոյեմբերին ավարտում է Ակադեմիան և նշանակվում 48-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի առաջին մասի պետ:

Իվան Բուդիինի հեծելա-մեքենայացված խմբի կազմում 1939թ. մայրի Ստեփան Գինոսյանը մասնակցում է արևմտյան Բելառուսի ազատագրմանը՝ որպես շտաբի բաժնի պետ: Իսկ արդեն գնդապետի կոչումով նա 1939-1940թթ. մասնակցում է խորհրդաֆիննական պատերազմին, որտեղ էլ բացահայտվում են նրա հրամանատարական տաղանդն ու անձնական մարտական հմտությունները:

Հայրենական մեծ պատերազմի սկզբից մինչև վերջը Ստեփան Գինոսյանը ակտիվորեն մասնակցում է գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախմանը: Գնդապետ Ստեփան Գինոսյանը Արևմտյան ռազմաճակատի 33-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետի պաշտոնն ստանձնած ժամանակ մշակեց և ղեկավարեց Նարո-Ֆոմինսկ քաղաքի մարտական գործողությունը, որի համար էլ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

Ստեփան Գինոսյանի մարտական հետագա ուղին կապված է 49-րդ բանակի հետ, որի զորքերը Երկրորդ Բելառուսական ռազմաճակատի կազմում կենտրոնական դիրք էին գրավել Բելառուսական ռազմական գործողությունում: Այդ ժամանակ Գինոսյանը մեծ վարպետություն ցուցաբերեց ջրային խոշոր պատնեշի հաղթահարմամբ ժամանակակից պաշտպանության ճեղքումը հանգամանորեն մշակելու, նախապատրաստելու և իրականացնելու գործում: 49-րդ բանակը մասնակցեց լեհական Գդանսկ քաղաքի հարձակողական գործողությանը, որից հետո ռազմերթ կատարեց Օդեր գետի երկայնքով:

Այդ ժամանակ Գինոսյանը արդեն գեներալ

էր և նա՝ որպես շտաբի պետ, հարկ եղավ կազմակերպել և իրականացնել ամբողջ բանակի ավտոփոխադրումները, որը նա կատարեց գերազանց: 49-րդ բանակի կազմում մասնակցել է նաև Դնեպրի և տասնյակ այլ գետերի համար մղված մարտերին և միշտ հասել հաջողության: Ստեփան Գինոսյանը մասնակցել է նաև Լեհաստանի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի ազատագրական մարտերին:

Գեներալ-մայոր Ստեփան Եղիայի Գինոսյանը Հայրենական Մեծ պատերազմում ունեցած մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի 4, Սուվորովի 2-րդ աստիճանի, Կուտուզովի 1-ին և 2-րդ աստիճանի, Բոգդան Խմելնիցկու 1-ին աստիճանի շքանշաններով, ինչպես նաև՝ լեհական երեք շքանշաններով և Խորհրդային Միության մի շարք մեդալներով:

1950թ. ԽՍՀՄ Զինված ուժերի գլխավոր



շտաբի Կ.Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիան ավարտելուց հետո Գինոսյանը մնաց ակադեմիայում դասախոսական աշխատանքի: Նա բարոյապես կայուն էր և ունկնդիրների ու դասախոսների շրջանում վայելում էր բարձր հեղինակություն:

Ետպատերազմյան շրջանում Ստեփան Գինոսյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում: Նա իր զինվորական ծառայությունը շարունակեց որպես զինվորական օկրուգի շտաբի պետ: Զինվորական տեսակետից պատրաստված հրամանատար էր, կարգապահ, ով ծառայողական հանձնարարություններին լրջորեն էր վերաբերվում, որոնք կատարում էր բարեխղճորեն: Նա ուներ կազմակերպչական բարձր ընդունակություններ, պահանջկոտ էր ինչպես իր, այնպես էլ ենթակաների նկատմամբ:

1964թ. Ս.Գինոսյանը հիվանդության պատճառով թողեց ծառայությունը: 1965 թվականի սեպտեմբերի 29-ին՝ կյանքի 65-րդ տարում, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գեներալ-լեյտենանտ Ստեփան Եղիայի Գինոսյանը հանկարծամահ եղավ:

Նրա հայրը շուտ էր մահացել և գերեզման էր դրվել գեներալ ու զինվոր որդիներ ունեցող ծնողի հպարտությամբ: Իսկ Ստեփանի մայրը մահացել էր որդու՝ Գուրգենի կարոտը սրտում, ով տուն չէր վերադարձել ռազմի արյունոտ դաշտից:

Երկրորդ աշխարհամարտին մասնակցել են շուրջ 400 սաթխացի: Սաթխա գյուղում է գտնվում մարտական փառքի պուրակը, որտեղ երկնասլաց սյան վրա փորագրված են այն 135 սաթխացի զնդապետների, լեյտենանտների, սերժանտների անունները, որոնք զոհվեցին պատերազմի ժամանակ: Սյան աջ և ձախ կողմերում տեղադրված են նույն գյուղի երկու զորահրամանատարներ՝ գեներալ-լեյտենանտ Ստեփան Գինոսյանի և քաղաքացիական կոնվնեթի մասնակից, կորպուսի հրամանատար, Կարմիր դրոշի շքանշանակիր Գրիգոր Խախանյանի կիսանդրիները: Նրանց անունները միշտ վառ կմնան թե՛ սաթխացիների և թե՛ մեր սրտերում:

ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան»
ռազմական պատմության
թանգարանի գիտաշխատող



ԿԻՐԻԼ ԻՎԱՆԻ ՇՇՈԼԿԻՆ

Կիրիլ Իվանի Շշոլկինը խորհրդային գիտության ականավոր մտքերից է, ով առանցքային դեր է խաղացել ատոմային զենքի զարգացման գործում: Սակայն քչերը գիտեն, որ նրա իսկական անունը Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյան է, իսկ նրա հայկական արմատներն առանձնահատուկ հետք են թողել նրա կենսագրության վրա:

Կիրիլ Իվանի Շշոլկինը ծնվել է 1911թ. մայիսի 17-ին՝ Թիֆլիսում: Դեռ փոքր տարիքից հետաքրքրվել է գիտությամբ, ֆիզիկայով: Հետագայում ընտանիքը տեղափոխվել է Ղրիմի Բելոգորսկ, Հայաստանի Նոր Բայազետ (ներկայումս՝ Գավառ): Այս բնակավայրերում են անցել Կիրակոսի մանկության և պատանեկության տարիները:

Մետաքսյան ազգանունը նա ժառանգել է մետաքսի առևտրով զբաղվող գողթնեցի պապից, որը գաղթել էր Ղրիմի Կարսու-բազար (Բելոգորսկ) քաղաք և շարունակում էր պապերի արհեստը, և որին լավ էին ճանաչում հատկապես Ղրիմի բնակիչները, որտեղ հայ առևտրականներն ազատ ու շահավետ առևտուր էին անում:

Պատանեկան տարիներին կորցնելով հորը, Կիրակոս Մետաքսյանը վերադարձել է ծնողների ծննդավայր՝ Ղրիմի Բելոգորսկ հայաշատ քաղաք, աշխատել է պետական տնտեսությունում, միաժամանակ սովորել ու ավարտել է միջնակարգ դպրոցը: 1928 թվականին Մետաքսյանն ընդունվել է Ղրիմի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-տեխնիկական ֆակուլտետ: Այնուհետև ուսումը շարունակել է Լենինգրադի ԽՍՀՄ ԳԱ առընթեր Բիմիական ֆիզիկայի ինստիտուտում՝ նախընտրելով այրման ուսումնասիրությունը: Նա փորձեր է կատարել նոր, նախադեպը չունեցող ինքնուրույն մեթոդներով և մեծ ճշգրտությամբ:

Այս ուսումնասիրությունները առանցքային դեր խաղացին նրա ապագա մասնակցության մեջ ԽՍՀՄ-ի ատոմային նախագծին: Նա աչքի է ընկել առաջին խորհրդային միջուկային զենքի՝ RDS-1 և առաջին ջերմամիջուկային զենքի պայթեցման գործընթացում իր աշխատանքով



և իր դերով, նաև որպես միջուկային զենքի մշակման «Չելյաբինսկ-70» (Ուրալ) խորհրդային կենտրոնի առաջին գիտական ղեկավար:

Նա հայազգի ֆիզիկաքիմիկոս, գազերի այրման և ճալթյունի տեսության ստեղծողներից է, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1953), ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ Ատոմային նախագծի առաջատար գիտնականներից մեկը: «Խորհրդային առաջին ատոմային ռումբի փորձարկման կնքահայրը», Սոցիալիստական աշխատանքի միակ եռակի հայ հերոսը:

Չնայած պահպանված կենսագրական տվյալներին, հայերենով ազատ հաղորդակցվելուն, Շշոլկինի հայկական ծագումը երկար տարիներ թաքցվել է, քանի որ նա ատոմային զենքի ստեղծողներից էր ու ընտանիքի գտնվելու վայրը հույժ գաղտնի է եղել:

1938 թվականին Մետաքսյանը ստացել է ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1940 թվականին Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի դոկտորանտ էր:

1941 թվականի հունիսի 22-ին նա կամավոր մեկնել է ռազմաճակատ, սակայն մի քանի ամսից հետո է կանչվել՝ որպես ռազմական արդյունաբերության համար կարևոր գիտնական: Նա ուղարկվել է Կազանի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ: Այրման ու պայթյունի ֆիզիկայի ասպարեզում նրա կատարած փորձերը վճռորոշ նշանակություն են ունեցել ԽՍՀՄ-ում միջուկային զենքի ստեղծման գործում:

ԽՍՀՄ ուրանային նախագծի գիտական հիմքերի մշակման ղեկավարներ ակադեմիկոս Ա. Ալիխանովի և Կուրչատովի հետ միասին Շչոլկին-Մետաքսյանը ստեղծել են Եվրոպայում առաջին ցիկլոտրոնը: ԽՍՀՄ-ն իր գաղտնի փորձերը կատարում էր Արագած լեռան վրա կառուցված փակ լաբորատորիայում, որտեղ ուսումնասիրվում էին տիեզերական ճառագայթների կազմում պրոտոնների առկայությունը:

«Ուրանային նախագծի «աշխատանքները վերսկսելու նպատակով 1942 թվականին Ա. Ալիխանովը հետ է կանչվել Մոսկվա, և 1943 թվականի սկզբին նրան ուղարկել են «Օբյեկտ» կամ, ինչպես ընդունված էր ասել, տվել են «փոստարկղի համար...»:

1945 թվականին Ա. Ալիխանովը ստեղծեց նոր լաբորատորիա: Նրա ղեկավարությամբ լաբորատորիան իրականացրեց ջրի դանդաղեցուցիչով աշխատող ռեակտորի կառուցումը: Այդ ժամանակ ԱՄՆ-ում ընթացքի մեջ էին ատոմային ռումբի ստեղծման ինտենսիվ աշխատանքները: ԱՄՆ-ի կողմից Ճապոնիայի Նագասակի և Հիրոսիմա քաղաքների վրա ատոմային ռումբի նետումից հետո ԽՍՀՄ-ում արագացվել էին ատոմային ռումբի ստեղծման աշխատանքները: Այդ նպատակով կազմված հատուկ ատոմային կոմիտեի և գիտական խորհրդի կազմում ընդգրկվեցին ակադեմիկոսներ Ա. Իոֆեն,

Ի. Կուրչատովը, Պ. Կապիցան, Ա. Ալիխանովը, գիտխորհրդի նախագահ Բ. Վաննիկովը:

Կուրչատովը և ատոմային նախագծի մյուս առաջատար գիտնականները, որոնց վստահում էր Բերիան՝ Իոֆեն, Ալիխանովը, Կիկոինը, Արցիմովիչը, Խարիտոնը և Շչեկինը, որոնց թույլատրվեց աշխատել NKVD-ի նյութերի հետ, ոչ միայն եզրակացություններ էին պատրաստում այդ նյութերի վերաբերյալ, այլև ձևակերպում էին առաջադրանքներ արտասահմանում գործող հետախույզների համար:

Կուրչատովի պահանջով Մետաքսյան-Շչոլկինը «Օբյեկտում» զբաղվում էր ատոմային ռումբի հետ կապված աշխատանքներով: «Օբյեկտում» ռումբի ավտոմատիկայի համակարգի մշակման ղեկավարը Ս. Գ. Քոչարյանցն էր, տնտեսության գծով ղեկավարը Խ. Կոստանոյանը, իսկ Շչոլկինը և՛ գիտահետազոտական սեկտորի ղեկավարն էր, և՛ գլխավոր կոնստրուկտորի առաջին տեղակալը: Շչեկինն այն մարդն էր, որ ամեն ինչ գիտեր ատոմային ռումբի պայթյունի, դրա մանրամասների մասին, և 35 տարեկանում պաշտպանած դոկտորական թեզն էլ հենց ատոմային ռումբի պայթուցիչների մասին էր:

1949 թվականի օգոստոսի 29-ին ատոմային ռումբը Սեմիպալատինսկ ռազմակայանում հաջողությամբ փորձարկվել է: Այդ պահին էր, որ պետական հանձնաժողովի նախագահի պահանջով Կուրչատովը հայտարարել է.

Դե ինչ, ռումբն արդեն անուն ունի, թող ունենա նաև կնքահայր՝ Շչոլկին ազգանվամբ...

Ատոմային առաջին ռումբի փորձարկումը կրեց Շչոլկինի անունը: Շչոլկինին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Երկրորդ անգամ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում Շչոլկինին շնորհվեց 1951 թվականին՝ Խորհրդային զինված ուժերի սպառազինման մեջ ներդրած ավիառումբի համար: 1955 թվականին կազմակերպվեց «Արգամաս-16»-ի կրկնօրինակը՝ «Չեյաբինսկ-70»-ը, որի գիտական ղեկավարը և գլխավոր կոնստրուկտորը դարձավ Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյան-Շչոլկինը, իսկ գլխավոր ղեկավարը՝ Ս. Գ. Քոչարյանցը:

Այնուհետև մինչև 1958 թվականը «Արգամաս-16»-ում ստեղծվեց առաջին ջրածնային ռումբը:

1958 թվականի սեպտեմբերի 12-ին ջրածնային ռումբի հաջող փորձարկումից հետո Մետաքսյան-Շչոլկինը երրորդ անգամ արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Նա չորս անգամ արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի, ինչպես նաև Լենինի չորս և Կարմիր աստղի շքանշաններով: 1958 թվականին Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյան-Շչոլկինն ընտրվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Մետաքսյանը հույժ գաղտնի պայմաններում եղել է Թբիլիսիում Սերգեյ Քոչարյանցի հետ՝ նրա հայրենի Գավառում:

Դեռևս 1957 թվականից Մետաքսյանի մոտ սկսել էին ի հայտ գալ սրտի հիվանդության նշաններ: 1960 թվականին Մետաքսյան-Շչոլկինի առողջությունը վատթարացել էր: Նա վերադառնում է Մոսկվա՝ նախկին ծառայության վայրը՝ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, հրապարակում է մի շարք գիտական ծավալուն հոդվածներ ու գրքեր, մասնավորապես՝ «Միկրոաշխարհի ֆիզիկան» և «Գազի այրման դինամիկան», երկուսն էլ հրատարակվել են 1965 թվականին: 1960 թվականին 49 տարեկան հասակում նրան նշանակվել է Միութենական անհատական թոշակ:

Ճանր հիվանդ էր Մետաքսյանը, երբ նրան այցելել է Կուրչատովը: Դրանից երկու օր անց Մետաքսյանը մահացել է: Լուրից մեծապես ազդվել է Կուրչատովը, սակայն չի կարողացել մասնակցել թաղմանը:

Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյան-Շչոլկինը մահացել է 1968 թվականի նոյեմբերի 12-ին:

Ծննդյան 60-ամյակի օրը Ղրիմի Բելոգորսկ քաղաքի թիվ 1 դպրոցի պատին փակցվել է նրա բրոնզե հուշաքանդակը, Ղրիմի նորաստեղծ քաղաքներից մեկն անվանվել է Շչոլկինո:

Մետաքսյանը համարվում է «Չելյաբինսկ-70» (ներկայիս Սնեժինսկ) քաղաքի երկու հիմնադիրներից (1955) մեկը:

2011 թվականին նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ քաղաքի կենտրոնական հրապարակի ծառուղում տեղադրվել է Կիրիլ Շչոլկին կիսանդրին:

2011 թվականին Ռուսաստանը թողարկել է նամականիշ ի պատիվ Շչոլկինի 100-ամյակի հիշատակին:

Հայաստանում քչերին է հայտնի Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյան-Շչոլկին անունը: Շչոլկինի հայկական ծագումը երկար տարիներ թաքցվել է, քանի որ նա ատոմային զենքի ստեղծողներից էր ու նրա գտնվելու վայրը հույժ գաղտնի է եղել: Դրան նպաստել է անուն-ազգանվան բառացի ռուսիֆիկացումը. Կիրակոսը՝ Կիրիլ, Մետաքսյանը՝ Շչոլկին կամ Շչելկին: Հայաստանում դեռևս նրա հիշատակը որևէ կերպ չի անմահացվել:

Ներկայումս գաղտնագերծված է նրա աշխատանքների մի փոքր մասը միայն:

1932 թ.-ին Շչոլկինն ավարտել է Սիմֆերոպոլի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը, աշխատել է Մոսկվայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտում՝ որպես լաբորատորիայի վարիչ, աշակերտել է Նոբելյան մրցանակի դափնեկիր Ն. Սեմյոնովին: 1946 թվականին նշանակվել է ատոմային, իսկ այնուհետև՝ ջրածնային ռումբերի ստեղծման գլխավոր կոնստրուկտորի և գիտական ղեկավարի պաշտոնում (Արգամաս-16), որից հետո հիմնադրել է Ուրալի միջուկային կենտրոնը:

Չնայած իր ականառու ծառայություններին, Կիրիլ Շչոլկինի անունը մնում է քիչ հայտնի հասարակության համար: Այնուամենայնիվ, նրա ներդրումը գիտության և ԽՍՀՄ-ի պաշտպանության ոլորտում անհնար է գերազնահատել: Նա ոչ միայն գիտնական էր, այլև մարդ, որը փոխեց պատմության ընթացքը՝ ապացուցելով, որ գիտելիքը և գործին նվիրվածությունը կարող են ազդել ողջ ժողովուրդների ճակատագրերի վրա:

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ДВА АИСТА – СИМВОЛ МИРА, ЛЮБВИ И ВЕРНОСТИ: ЖИЗНЕННЫЙ ПУТЬ И НАСЛЕДИЕ ВЕТЕРАНА ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ ГРАНТА КАРАПЕТЯНА

7 ноября отметил свое 104-летие ветеран Великой Отечественной войны Грант Меликсетович Карапетян – один из самых активных участников деятельности Объединения ветеранов Армении имени маршала И.Х. Баграмяна.

Лицо современного ветеранского движения. Он прошёл через все переломные сражения войны, был тяжело ранен и награждён двумя орденами Отечественной войны, двумя орденами Красной Звезды и множеством медалей. В мирное время Грант Меликсетович принимал участие в восстании Еревана и других городов Армении, за что был удостоен званий Заслуженного архитектора и Заслуженного строителя.

В 96 лет он написал книгу «От прадеда до правнука» – поистине бесценный дар внукам и правнукам, который рассказывает историю рода, начиная с Западной Армении и до наших дней. Эта книга – хранитель памяти, к которой его потомки относятся с особым трепетом.

В 2023 году за свой писательский труд и активную жизненную позицию Грант Меликсетович вместе с поэтом-фронтовиком Лачином Степаняном был принят в ряды Международного союза писателей имени святых Кирилла и Мефодия в качестве почётного члена этой большой международной писательской организации, объединившей служителей пера из разных стран. Грант Меликсетович является самым старшим членом этой писательской организации.

Но и на этом творческая история Гранта Меликсетовича не остановилась. Он стал образцом творческого долголетия и долгой службы Родине и человечеству. Когда ему исполнилось сто лет, внучка подарила ему краски, холсты и мольберт – и вот он взялся за кисти. С тех пор он создаёт картины, в которых отражается природа Армении, величие храмов, безмятежное мирное небо. Эти картины он рисует с настоящим

увлечением и щедро дарит окружающим. В каждом своём произведении в уголке он ставит подпись – два аиста, символы мира, добра, любви и семейственности. Кто, как не он, прошедший всю Великую Отечественную войну, знает истинное значение этих символов – символов надежды и верности.

У Гранта Меликсетовича уже были две персональные выставки – в Русском доме в Ереване и в Объединении ветеранов Армении имени маршала И.Х. Баграмяна. Его картины украшают частные коллекции известных людей, дипломатов, общественных лидеров, а также, конечно, всех членов его большой семьи.

Грант Меликсетович Карапетян – живое олицетворение силы человеческого духа, памяти и любви, которые вдохновляют всех вокруг своей жизнестойкостью и творчеством.

Прежде чем перейти к боевому пути Гранта Карапетяна, обратимся к его корням, опираясь на страницы его авторской книги «От прадеда до правнука». Именно в ней отражена история его рода, передающая память и стойкость поколений, которые сформировали характер и судьбу самого Гранта Меликсетовича.

ПРАДЕД

В конце XVIII века двое молодых парней из Западной Армении перебрались в Восточную Армению и поселились в деревне Айназур (ныне Агавнадзор Вайоц-Дзорского района). Они работали батраками, зарабатывая себе на кусок хлеба. Один из них разумно расходовал заработанные гроши, другой же пропивал их и всю жизнь оставался бедняком. Того, кто проявил разум в расходах, звали Карапет – именно от его имени произошла наша фамилия.



Однажды за покос пшеничного поля Карапет получил в подарок пчелиный улей — լւնը (улья тогда плели из ивовых веток, обмазывали коровьим кизяком, придавая им цилиндрическую форму). Трудолюбивый юноша быстро довел количество ульев до 500 и разбогател. Он построил для тех времен роскошный дом — первое в селе двухэтажное здание с летней спальней, верандой и балконами. Первый этаж занимали складские помещения, винодавильня с карасами для хранения вина. Дом был огромным, с зимними и летними помещениями, скотным двором, хлевом и сенохранилищем.

Карапета турки называли «Балу Карапет» — «медовый Карапет», а односельчане прозвали его «Роенц Карапет», что на курдском языке имело презрительный оттенок. Сам Карапет часто говорил, что он римский подданный, и местные остряки переделали армянское название Հռոմ (Рим) в Ռոնցը.

У Карапета было четыре сына и дочь. Старший сын Есаи увлекался охотой. Однако после

того как его сын погиб во время охоты от отдачи боевой винтовки, Есаи сломал свою охотничью винтовку и бросил это занятие. Второй сын — Мовсес, мой дед, о котором расскажу отдельно. Третий сын, Ваан, был мобилизован в армию и воевал против турок в составе русской армии, но пропал без вести. Есть история, что однажды в дом Карапета пришли двое военнослужащих, говоривших только по-русски: один блондин, другой смуглый и бородатый — последний, по словам Анны (вдовы Мовсеса), был её сыном Вааном. Несмотря на упрёки свекрови, Анна промолчала. Много лет спустя в амбаре была обнаружена надпись на армянском: «Я пришёл и ушёл, никто меня не узнал, кроме Анны». Много усилий предпринимали для его розыска, в том числе внук Мовсеса Грач, но безуспешно.

Четвёртый сын Карапета, Погос, примкнул к большевикам и играл в семье неприязненную роль. Дочь была выдана замуж в соседнее село.

Подробно писать о прадеде — значит писать целые тома. Всё, что я о нём знаю, услышано от

бабушки. Он своим трудом скопил большое богатство: построил шикарный для того времени дом, посадил четыре виноградника площадью более гектара каждый, освоил целинные земли, имел фруктовый сад, лесной участок, пахотные земли, скот и пасеку. У стен его дома останавливались купеческие верблюжьи караваны, шла активная торговля сельскохозяйственной продукцией.

О старухе, жене Карапета, ходили истории — она ругала мужа, когда тот приносил не бумажные деньги, а золотые монеты — боялась, что дети их украдут и станут играть ими, — считала бумажные удобнее для хранения.

ДЕДУШКА И БАБУШКА

Второй сын Карапета, Мовсес, мой дед, был женат на красавице Анне, которую Карапет привёз из соседней деревни, обещав её защиту до совершеннолетия. После достижения возраста сыграли свадьбу Мовсеса и Анны. Мовсес был деловым, уважаемым старостой деревни, но рано скончался, заразившись дизентерией в тюрьме, куда попал за участие сельчан в погроме турецкой деревни, устроенном из-за спорного распределения оросительной воды.

Анна осталась молодой вдовой с четырьмя малолетними детьми: Липаритом (12 лет), Ануш (10), Меликсетом (7–8) и Арамом (3–4). После смерти мужа старший сын Карапета, Есаи, отказался помогать сиротам и потребовал раздела отцовского хозяйства.

Карапетовское хозяйство было разделено на три части. Есаи и Погос построили свои дома на краю села, а старуха с накопленным золотом ушла с Есаи. Карапет остался с Анной и детьми, помогая ей вести хозяйство до конца своих дней.

Водное хозяйство было строго распределено — семья получала сутки полива, но Есаи перекладывал воду в свою пользу днём, оставляя Анне лишь ночное время.

Однажды туманной ночью, когда они поливали поле, перед ними явилось странное существо — большая лошадь в тумане, казавшаяся чудовищем. Дети убежали к Анне, старик тоже был поражён этим явлением.

Так с трудом Анна растила детей, а вскоре и старик умер.

Меликсет хорошо учился, мать заметила его способности и решила отправить сына учиться в город. Но средств не было, и, попросив денег у Есаи, она получила отказ. Тогда Анна заложила серебряный пояс у ростовщика, чтобы оплатить обучение.

Вскоре Липарит женился, Ануш вышла замуж за кузнеца из соседнего села, а младший Арам остался в доме. Позже его женили мои родители — Меликсет и Анна — на ученице Варти.

Для различия в семье Анну, мою маму, часто называли Анаид, чтобы не путать со свекровью.

ОТЕЦ И МАТЬ

Меликсет родился 1-го ноября 1892 года. Пятнадцатилетним юношей он приехал в город Ереван (тогда Эривань) и в сентябре 1907 года поступил в класс семинарии. Успешно окончил её в мае 1912 года. По окончании устроился учителем в селе Норашен Нахичеванского района.

Мать, Анна (девичья фамилия Назарян), родилась 7 февраля 1892 года в Эриване в семье владельца лимонадного завода Ованеса Назарова. Она поступила в училище (гимназию) в 1905 году и окончила его в 1915. Во время учёбы Меликсет и Анна были знакомы, он знал её семью. По окончании училища Меликсет приехал в город и предложил Анне место учительницы в школе, а также свою руку и сердце. Анна долго не соглашалась, мотивируя отказ тем, что он деревенский. В дело вмешалась старшая сестра Анны — Мариам, которая уговорила сестру. В 1918 году они поженились. Свадьбы пышной не было, лишь венчание в местной церкви.



Через год у них родился первый сын, которого назвали Генрихом, но он скончался в двухлетнем возрасте.

С 1918 года Меликсет и Анна преподавали в разных селах Даралагяза (ныне Вайоц-Дзор) и активно участвовали в жизни района. Отец Меликсета был членом дашнакской партии, секретарём районной организации Дашнакцутюн, хорошо знакомым с военачальниками Нжде и Дро. Он воевал в отрядах Нжде (не рядовым). Тяжёлое время было тогда: шла Первая мировая война, турки устроили геноцид, истребив до 1,5 миллиона армян, в России шла революция, в Армении — вражда между большевиками и дашнаками. В 1918 году отец возглавил армянское население и вывел его из Нахичевана, спасая от турецкой резни.

В 1920 году отец и мать прибыли в село Айназур (ныне Агавнадзор) к бабушке Анне и препода-

вали там в школе. До 1925 года они работали в разных селах района. В 1925 году отца арестовали как члена дашнакской партии, мать лишили работы за супружеские связи с дашнаком.

В доме бабушки маму называли Анаид, чтобы не путать с бабушкой. В 1926 году мать с грудным младшим сыном Генрихом (которого она не могла назвать по имени, вспоминая своего первого ребёнка, и ласково называла Нушик) навестила в тюрьме мужа. Во время свидания отец тайно передал ей кипу рукописей, которые хранились некоторое время, но в 1930-х годах были уничтожены из страха перед репрессиями. Мать жалела об этом, как и я сейчас.

Бабушка часто рассказывала мне эпизоды из своей жизни. В конце 1920-х годов, когда запасы хлеба были на исходе, дети Липарит, Арам и Грач с ослами и мулом отправились на базар в соседний турецкий район, продали продукты,

купили зерно и вернулись домой, несмотря на препятствия и ночные морозы. В пути один осёл погиб, но волки оставили зерно хозяевам.

Во время Великой Отечественной войны Арам и Грач были мобилизованы. Арам, плохо владея русским языком, служил поваром в хозяйственных частях и встретил Победу в Берлине, а Грач попал в плен в Крыму и после трёхлетней ссылки в Сибири вернулся в Армению, поселившись в деревне Чва.

В 1929 году в подвале дома дедушки Мелик-сета была винодавильня, где мы, Арам, Грач и я, давили виноград ногами и собирали сок для вина. В том же году пьяные дети Генрих и Ерджаник забрели к школе и заснули у стены, их спасла Варти.

В конце 1926 года отца сослали в Сибирь. В 1929 году срок строгой ссылки истёк, но остался пятилетний срок свободной ссылки, не разрешавшей возвращаться в Армению. Отец с товарищами попытался обосноваться в Мариуполе, но им отказали из-за статуса приморского города. Выбрали Мелитополь, где отец вызвал семью к себе.

В МЕЛИТОПОЛЕ

В первое время, обосновавшись в этом городе, отец занимался сапожным делом, которое освоил в Сибири. К нашему приезду он его бросил и открыл артель по производству простокваши (мацун). Молоко привозили крестьянки из соседних деревень. В гранёных чайных стаканах заквашивали молоко, и произведённую продукцию распространяли почти по всем буфетам и столовым города. Продукт с охотой принимали все указанные объекты. Мацун стал одним из основных продуктов буфетов города. Закупленное молоко в бидонах кипятили, заквашивали, а потом при определённой температуре разливали в стаканы.

У отца были работники. Иногда (очень редко) мацун не заквашивался или выступала

на поверхность вода. Отец говорил работницам, что грибки пришли в негодность, и он вновь их запросит с родины. Наивные работницы верили в его версию (да и он сам чуть не верил в свою ложь). Чтобы не быть голословным, показывал им заранее засушенный мацун в виде таблеток, которые он затем превращал в порошок. Кипячёное молоко при остывании, разумеется, покрывалось плёнкой, которую аккуратно снимали. Сливки отец приносил домой, и мы, дети, охотно лакомились ими. Производство приносило значительный доход. 30-е годы прошлого века были тяжёлыми для украинского народа. В Мелитополе в эти годы был голод. Целые семьи умирали от голода. Отец говорил, что, идя на работу утром, видит, как телегами собирают опухшие трупы с улиц.

Его же дело процветало. Впоследствии он открыл фотомастерскую.

...Мы прожили в Мелитополе до 1935 года. В этот год окончился срок свободной ссылки отца. Не надо было каждые 15 дней являться в органы регистрации. По окончании школьных занятий в указанный выше год мы вернулись в Армению по настоятельной просьбе матери, мол, соскучилась по родным. Отец уступил ей, и мы вернулись на родину летом 1935 года.

ВЕЛИКАЯ ОТЕЧЕСТВЕННАЯ ВОЙНА

В августе 1941 года Гранта Карапетяна и ещё семьдесят мальчишек отправили в школу ВВС в Тбилиси. Он вспоминает: «На вокзале нас провожали родители, друзья, товарищи. Из окон переполненных вагонов мальчики кричали: До свидания, девушки!», а девушки отвечали: «Со скорой победой возвращайтесь, мальчики!» Но многие из этих мальчиков не вернулись. А многие вернувшиеся были искалечены войной».

В начале 1942 года Военно-Воздушная школа в Тбилиси была ликвидирована, а курсанты направлены в Бакинское пехотное училище. Боевой путь Гранта начался с Кавказа. Он был

командиром пулемётного взвода. В боевых действиях Великой Отечественной войны принимал участие на 4-ом Украинском фронте в составе 11-го Прикарпатского корпуса 18-ой армии в 271-ой стрелковой горловской Краснознамённой, ордена Богдана Хмельницкого дивизии в 864-ом полку, в 3-ем батальоне.

«Каждый раз, идя в наступление, у меня во взводе бывало до 36-37 солдат. После боя оставалось 8-9 бойцов, в том числе и я. Часть оставалась на поле боя, часть покидала передовую ранеными», — вспоминает Грант Карапетян.

Часто жизнь висела на волоске. «Однажды вброд форсировали небольшую горную речку в Карпатах и укрепились на склоне покрытой лесом горы, — рассказывает ветеран. — Рядом был гуцульский домик. Мы с командиром стрелкового взвода зашли в этот дом, развели небольшой костёр и стали сушить портянки. Лейтенанта звали Вася, фамилию не помню. Обувшись, Вася сказал мне: «Ну, я пошёл». И пошёл к бойцам.

Буквально через несколько минут, обувшись, я тоже направился к своим бойцам. Поднявшись на поляну, вижу, сидит Вася среди поляны один. Я тронул его за плечо и спросил:

— Что ты сидишь? Пойдём!

— Лейтенант, не трогай его, он кончил воевать, — издали крикнул мне солдат. Оказалось, Вася попал под миномётный обстрел немцев. Что было бы со мной, если б я вышел к бойцам вместе с ним? Наверняка, разделил бы его участь».

А вот ещё одна история из воспоминаний Гранта Карапетяна: «Однажды, выйдя на отдых во второй эшелон, я снял промокшую от дождя шинель, чтобы просушить. Повесив её на верёвке, я удивился: подол шинели во многих местах был продырявлен осколками снарядов и пулями. Удивительно, как ни один осколок, ни одна пуля не задела мои ноги».

Но всё-таки осколок настиг и Гранта. 28-го апреля 1945 года под Прагой он был ранен в левую руку. Победу Грант Карапетян встретил



в прифронтовом госпитале. Пролежав месяц, с незажившей раной он вернулся в свой полк, в батальон.

«О фронтовых буднях на передовых позициях можно рассказать на несколько томов...», — говорит ветеран и переходит к рассказу о своём отце — тоже бойце Красной Армии: «Во время войны, в 1941 году, когда немецкие войска были на Северном Кавказе, отец возглавлял бригаду, которая рыла противотанковый ров. Он попал под бомбёжку и был ранен в ногу. Немцы захватили город. Хозяйка, у которой жил отец, привела к нему немецкого санитаря, чтобы он обработал рану. Первым делом немец схватил висящие на стене его карманные часы. Отцу, вероятно, не понравился «грабёж» немца, и он рассердился на него. Немец, перевязав рану, сделал ему укол. Видимо, укол был ядом. После этого укола отцу стало плохо, и он скончался в этом проклятом 42-ом году на пятидесятом году жизни».

Эту историю Грант узнал гораздо позже. А тогда, в 41-ом, на фронте ему приснился странный сон, который оказался вещим: «Горел казённый дом. Пламя охватило его со всех сторон. В этом доме оказались мы вдвоём, отец и я. Я выскочил в окно и, как ни старался помочь отцу, не смог. Он сгорел там, о его смерти я не знал. Подобный сон я видел ещё раз».

Уже после войны, когда Грант и его брат Генрих демобилизовались, они первым делом поехали в Кропоткин, где нашли могилу отца и поставили железный крест.

В 1946 году Грант Меликсетович вернулся в Армению с наградами — орденами Отечественной войны II степени (дважды), Красной Звезды (дважды) и многочисленными медалями.

Он вспоминает: «Поезд прибыл в Ереван рано утром. Транспорта не было. Пешком пустились домой. И вот, мы у дверей нашей комнаты. Постучались, затем ещё раз. Мать тихонько спросила: «Кто там?». Генрих, не долго думая, сказал

властно: «Откройте, милиция!» Мать, видимо, с испугу тихо открыла дверь и была поражена, потёрла руками глаза и удивлённо посмотрела на нас. Перед ней стояли два сына, вернувшиеся с фронта».

Вернувшись к мирной жизни и окончив университет, Грант Меликсетович устроился работать в «Армгоспроект». Имеет звания Заслуженного архитектора Армении и Заслуженного строителя. Он строил здания в Ереване, Ванадзоре и других городах Армении. В 1992 году вышел на пенсию, проработав в «Армгоспроекте» 41 год. Грант Меликсетович также является ветераном труда.

В 1951 году он женился на девушке по имени Женя. Они прожили долгую и счастливую жизнь вместе, родив и вырастив сына Лёву и двух дочерей-погодок — Нелли и Наиру.

В наши дни Гранта Меликсетовича, несмотря на солидный возраст, можно часто встретить на историко-мемориальных и общественных мероприятиях, в окружении детей, внуков и правнуков, которые трепетно о нём заботятся. Это тепло и внимание близких придают ему сил и радости.

Сам Грант Меликсетович не удивляется своему великому возрасту и говорит, что не всегда его ощущает, потому что в душе хочет жить, творить и общаться с родными. Именно эта жажда жизни и теплые семейные отношения поддерживают его дух и вдохновляют каждый день.

ЕЛЕНА ШУБАЕВА

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՆՎԻՐՅԱԼԸ

«Արսեն Ավթանդիլյանը համարձակ, ձեռներեց, եռանդուն և աշխատասեր հրամանատար էր, մտածում էր տակտիկապես գրագետ և ոչ ստանդարտ ձևով: Կարգապահ էր, պահանջկոտ՝ իր ու ենթակաների նկատմամբ: Բարեխղճորեն էր աշխատում գնդի մարտունակությունը բարձրացնելու վրա...»: ԽՍՀՄ հերոս, գեներալ-գնդապետ Հ. Մամսուրով



Խորհրդային Միության հայազգի գեներալներն աչքի են ընկել իրենց ռազմավարական մեծ հմտություններով, հանդես են եկել որպես մարտական առաջնորդներ, հրամանատարներ, որոնց գործունեությունը կարևոր դեր է ունեցել Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի մեջ: Նրանցից մեկն էր գեներալ-մայոր Արսեն Մարկոսի Ավթանդիլյանը (Ավթանդիլով):

Արսեն Ավթանդիլյանը ծնվել է 1910թ. նոյեմբերի 16-ին (29-ին) Բաքու քաղաքում՝ արցախցիների ընտանիքում: Հայրը՝ Մարկոս Ավթանդիլյանը, հաստատակամ ու շիտակ մարդ էր, Բաքվում աշխատում էր որպես հյուսն:

Մայրն էլ ջանասեր, հոգատար կին էր, ով շատ էր ցանկանում իր զավակներին տեսնել ազնիվ, վեհանձն, կրթված ու երջանիկ, ինչպես նրանց հայրն էր:

Հոր մահից հետո՝ 1924 թվականին, Արսեն Ավթանդիլյանը տեղափոխվում է ավագ քրոջ մոտ՝ Սամարղանդի մարզի Զիզակ քաղաքը, որտեղ էլ ստանում է նախնական կրթությունը: Նա ցանկանում էր գրել-կարդալ սովորել, կոփվել ֆիզիկապես ու հոգեպես, այնուհետև՝ լավ տիրապետել զինվորական գործին:

1924թ. Ավթանդիլյանն ընդունվում է Գորկու անվան դպրոցը: Դպրոցական կյանքին զուգահեռ պատանի Արսենն աշխատում էր որպես բամբակագործ: Հերթափոխի աշխատանքից հետո երեկոյան հաճախում էր հանրակրթական դպրոց:

1929թ. Ավթանդիլյանն ընդունվում է Տաշքենդի Վ. Լենինի անվան միջինասիական միացյալ ռազմամարզական դպրոցը և 1932թ. ավարտում գերազանց վկայագրով: Սովորելու տարիներին մասնակցել է Ղազախստանում, Ղրղզստանում և Թուրքմենստանում բասմաչի ավազակախմբերին ջախջախելու մարտերին:

1934թ. նա տեղափոխվում է Սամարղանդ՝ 19-րդ դիվիզիայի առաջին հեծելազորային գունդ, որտեղ միանգամից շատ մեծ հեղինակություն է ձեռք բերում՝ նախ նշանակվելով գնդի ռազմական դպրոցի դասակի հրամանատար, 1936 թվականին՝ նույն դպրոցի պետ, ապա՝ գնդի հրամանատարի տեղակալ:

Արսեն Ավթանդիլյանը միշտ եղել է այնտեղ, որտեղ պահանջել է հայրենիքը: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, այդ պահին նրա կարիքն Արևմտյան ռազմաճակատում

էր՝ Մոսկվայի մերձակայքում, Հյուսիսային Կովկասում, Կովկասի նախալեռներում, Կուրսկի բլրի վրա՝ իր զորամիավորումով անցնելով Դնեպրն ու Օդերը:

Պատերազմի ժամանակ՝ որպես գնդի հրամանատար, գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մարտնչող զորքերում նա մասնակցել է Մոսկվայի պաշտպանությանը, հյուսիս-արևմտյան ռազմաճակատի գործողություններին, Կուրսկ-Օրյոլի ճակատամարտին:

Կապիտան Ավթանդիլյանը պատերազմի գրեթե ամբողջ ընթացքում եղել է առաջնագծում՝ անձնական օրինակով ոգևորելով զինվորներին: Թշնամուց գրաված մարտական դիրքում էլ իմանում է իրեն մայրի կոչում շնորհելու մասին, իսկ 1942թ. փետրվարի 28-ին նրան արդեն շնորհվում է փոխգնդապետի կոչում, որի մասին տեղեկանում է հոսպիտալում, քանի որ Մոսկվայի պաշտպանության ժամանակ ծանր վիրավորվել էր:

Ավթանդիլյանի խնդրանքով նրան տեղափոխում են հեծելազոր, ինչին մեծ ոգևորվածությամբ և հուզմունքով է արձագանքում: Նա գլխավորում էր 7-րդ գվարդիական հեծելազորային դիվիզիայի 21-րդ հեծելագունդը: Նրա ղեկավարած գնդի մարտիկները հաջողությամբ էին կատարում իրենց առջև դրված բոլոր խնդիրները՝ ցուցաբերելով մարտական հմտություն և հաստատակամություն:

1943թ. սեպտեմբերին Արսեն Ավթանդիլյանին՝ որպես խելացի, կրթված, գրագետ սպայի և գնդի գերագանց հրամանատարի, շնորհվում է գնդապետի կոչում, իսկ գնդի անձնակազմն արժանանում է կառավարական պարգևների:

Հայրենական Մեծ պատերազմի ավարտից հետո գնդապետ Ավթանդիլյանը հաջողությամբ շարունակում է ծառայությունը

խորհրդային բանակում: 1954թ. ավարտում է Մոսկվայի Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիային կից բարձրագույն դասընթացները՝ զբաղեցնելով մի շարք զինվորական պաշտոններ, ղեկավարելով զինվորական տարբեր ստորաբաժանումներ: 1955թ. օգոստոսին Արսեն Ավթանդիլյանն արժանանում է գեներալ-մայորի կոչմանը:

Ցուցաբերած խիզախության ու տոկունության, ինչպես նաև գունդը հմտորեն ղեկավարելու և Հայրենիքին մատուցած ծառայությունների համար գեներալ-մայոր Ավթանդիլյանը պարգևատրվել է Լենինի, Կարմիր աստղի, երեք Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կուտուզովի 3-րդ աստիճանի շքանշաններով և մի շարք մեդալներով:


1963թ. դեկտեմբերին Արսեն Ավթանդիլյանն առողջական խնդիրների պատճառով ստիպված էր պաշտոնաթող լինել: Նա մահացել է 1986 թ. սեպտեմբերի 26-ին:

Արսեն Ավթանդիլյանը բարեխիղճ, հոգատար, զինվորին գնահատող հրամանատար էր: Եվ ինչպես ինքն էր ասում՝ «զինվորին պետք է դաստիարակել գեղեցկությամբ ու բարությամբ»: Ծառայողական պարտականությունները կատարելուն զուգահեռ բնակչության շրջանում նա զբաղվում էր նաև հասարակական աշխատանքով, նախագորակոչային երիտասարդության հետ հանդիպումներով և ռազմահայրենասիրական դաստիարակությամբ: Նրա անցած ճանապարհն օրինակելի է մեր և ապագա սերունդների համար:

ՇԱՀԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի էքսկուրսավար

ՍԱՄԱՆԴ ԱԼԻԻ ՍԻՊԲԱՆԴՈՎ



ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին:

Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատամարտում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ռսկե աստղ» մեդալ:

268. Փոխ-գնդապետ Սամանդ Ալիի Սիպբանդովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Մ. Կալինին

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Ա. Գորկին

Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թվական:

Սամանդ Ալիի Սիպբանդովը ծնվել է 1909 թվականի նոյեմբերի 20-ին՝ Կարսի նահանգի Ասանջան գյուղում, քուրդ չքավոր գյուղացու ընտանիքում: 1914 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս, ապա մի քանի տարի հետո՝ Հայկական ՍՍՌ Ապարանի շրջան:

Ս. Սիպբանդովը նախնական կրթություն է ստանում Թիֆլիսի №109 աշխատանքային դպրոցում: 1924 թվականին նա ընդունվում է բանֆակ, իսկ 1928 թվականին գործուղվում է Լենինգրադ՝ արևելագիտական ինստիտուտում սովորելու: 1931 թվականին Ս. Սիպբանդովը ընդունվում է ՍՄԿՊ շարքերը: 1932 թվականին նա վերադառնում է Ապարանի շրջան և աշխատում Սանգյար գյուղում իբրև դպրոցի վարիչ: 1935 թվականին նա առաջ է քաշվում պարտիական աշխատանքի, սկզբում ՀԿՊ Ապարանի շրջկոմում իբրև հրահանգիչ, իսկ 1938 թվականին ընտրվում է ՀԿՊ Ալագյազի շրջկոմի առաջին քարտուղար:

Երբ սկսվեց Հայրենական Մեծ պատերազմը, Ս. Սիպբանդովը սովորում էր Մոսկվայում Համ ԿՊ կենտկոմին կից պարտիական բարձրագույն դպրոցում: Այստեղից էլ նա մեկնում է ռազմաճակատ և 1941 թվականի հունիսից №217 դիվիզիայի քաղբաժնում որպես հրահանգիչ, մասնակցում Մոսկվայի հերոսական պաշտպանությանը: 1942 թվականի սեպտեմբերից նշանակվում է նույն դիվիզիայի №155 գնդի կոմիսար, իսկ այնուհետև գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, այդ պաշտոնում էլ մնում է մինչև 1945 թվականի օգոստոսի ամիսը:

№217 դիվիզիան, Տուլայից սկսած մարտական ուղի է անցել մինչև Գերմանիա: Նա մասնակցել է Բելոռուսիայի և Լեհաստանի ազատագրմանը:

1943 թվականի աշնանը Բոբրույսկ-Մինսկ մագիստրալն անցնելիս, Օսիպովիչի ռայոնից ոչ հեռու՝ Մալի Գարոշկի գյուղի մոտ №155 գնդի ստորաբաժանումներից մեկը մարտի

է բռնվում: Ճանապարհների խաչմերուկում թշնամին հարձակում է գործում մի քանի տանկով: Ստորաբաժանումը Ս. Սիաբանդովի ղեկավարությամբ, վեց ժամ կռվելուց հետո, թշնամու տանկերը ոչնչացնում է և գերի վերցնում մի քանի հարյուր զինվոր:

1943 թվականի դեկտեմբերին Բելոռուսիայի Սոժ գետի անցման և նրա մյուս ափում հենակետ ստեղծելու համար համառ մարտեր են տեղի ունենում: №217 դիվիզիայի գնդերը ազատագրում են Ստարիի սելոն, իսկ նրա №155 գնդի ստորաբաժանումները՝ Կալինովկան:

1944 թվականի աշնանը №217 դիվիզիայի գնդերը մարտական առաջադրանք ստացան անցնել Նարև գետը, հենակետ ստեղծել և պահպանել այն՝ մինչև օգնություն ստանալը: Նրանց դեմ դուրս էին եկել թշնամու մեծ ուժեր: Մի շարք դիվիզիաների, այդ թվում №212 դիվիզիայի ստորաբաժանումներն անցան գետը և հենակետ ստեղծեցին Դզբոնտ գյուղի շուրջը: Այն պահպանելու համար մի քանի օր համառ ու հերոսական մարտեր տեղի ունեցան, մեր զորամասերը թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին: Թշնամին անցավ հակագրոհի՝ հենակետը լիկվիդացնելու և այնտեղ գտնված մեր զորամասերը ոչնչացնելու համար: Հրամանատարությունը փոխ-գնդապետ Ս. Սիաբանդովին հանձնարարում է միավորել իր ունեցած բոլոր ուժերը և ինչ գնով լինի, պահպանել հենակետը: Ս.Սիաբանդովը պատվով է կատարում մարտական այդ առաջադրանքը, հանդես բերելով քաջ հրամանատարի հմտություն և տոկունություն: Դզբոնտ գյուղի շուրջը ստեղծված հենակետը պահպանելու ծանր մարտերում ցուցաբերած հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով փոխգնդապետ Սամանդ Ալիի Սիաբանդովին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում:

Այդ կապակցությամբ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գուսևը և ռազմական խորհուրդի անդամ գեներալ-մայոր

Իստոմիրը 1945 թվականի ապրիլի 28-ին հատուկ նամակ են ուղարկում Ս. Սիաբանդովի հորը՝ որի մեջ գրված է. «Ձեր որդի՝ փոխ-գնդապետ Ս.Սիաբանդովը, գերմանական զավթիչների դեմ մղվող պատերազմում ցույց տվեց մեր Հայրենիքին անսահման նվիրվածություն՝ իբրև Կարմիր բանակի քաջ սպայի: Նա պատվով կատարեց իր զինվորական պարտքը: Ռազմաճակատում կռիվների ամենադժան պահին Ս.Սիաբանդովը առաջավոր գծում զինվորների մեջ էր գտնվում: Նա իր անձնական օրինակով և քաջությամբ հերոսական սխրանքներ էր ոգեշնչում մարտիկներին՝ մարտական առաջադրանքը սրբությամբ կատարելու համար»:

Փոխ-գնդապետ Ս.Սիաբանդովը պարգևատրվել է Լենինի շքանշանով, «Ոսկե աստղ» մեդալով, ինչպես նաև երկու Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և հինգ մեդալներով:

1945 թվականի դեկտեմբերին զորացրվելով բանակից, Ս.Սիաբանդովը Սովետական Հայաստանում ղեկավար պարտիական աշխատանք է կատարում: 1952 թվականից նա աշխատել է Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության մինիստրությունում իբրև մինիստրի տեղակալ և կադրերի գլխավոր վարչության պետ:

1937 թվականից սկսած Ս. Սիաբանդովը ընտրվել է ինչպես ՍՍՌՄ, այնպես էլ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ:

Ս. Սիաբանդովը միաժամանակ զբաղվում էր գրական աշխատանքով:

1998 թվականին Սամանդ Ալիի Սիաբանդովին շնորհվել է Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի:

Նա Մահացել է 1998 թվականի նոյեմբերի 14-ին:

**ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի
Պատմության ինստիտուտ**

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆԸ՝ ՎՈԼՈՂՅԱ ՆՈՒՐԻԻ ԳՍՊՈՅԱՆ



1941-1945թթ.՝ Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերան Վոլոդյա Գսպոյանը ծնվել է 1925 թվականի դեկտեմբերի 7-ին Գեղարքունիկի մարզի Նոր Բայազեթի Սարուխան գյուղում, սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

Վ.Գսպոյանը Սովետական բանակ է զորակոչվել 1943թ. հունվարի 10-ին՝ 18 տարեկան հասակում: Մինչև ծառայության անցնելը, նրան նախ ուղարկել են Վրաստան՝ սովորելու Գորիի ռազմական ուսումնարանում: Երկու ամիս սովորելուց հետո նրան շնորվել է սերժանտի զինվորական կոչում, որից հետո մեկնել է քաղաք Մոժայսկ, որտեղից էլ տասնյոթ հայորդիների հետ մեկնել է Ղրիմ: Ծառայել է հայկական Թամանյան դիվիզիայի 526-րդ գնդում որպես հետախուզության դասակի հրամանատար: Այդ ժամանակ Թամանյան դիվիզիայի հրամանատարն էր Նվեր Սաֆարյանը; նրանք կռվում էին

1-ին Բելառուսական ճակատում: Ղրիմի, հետագայում նաև Ուկրաինայի ազատագրելուց հետո շարժվել են Լեհաստանի ուղղությամբ:

1945 թվականի հունվարին ազատագրելով Լեհաստանը՝ Վ.Գսպոյանը Թամանյան Դիվիզիայի հետ շարժվել են դեպի Գերմանիա: Ապրիլի 26-ին Բեռլինում՝ փողոցային մարտերի ժամանակ նա ծանր վիրավորվել է և տեղափոխվել հոսպիտալ: Ապաքինվելուց և պատերազմի ավարտից հետո հայկական Թամանյան դիվիզիայի հետ տեղափոխվել է Հայաստան՝ քաղաք Էջմիածին:

Վոլոդյա Գսպոյանը զորացրվել է 1950 թվականին: Նա ամուսնացել է 1951 թվականին և հայրենի գյուղից՝ Սարուխանից, տեղափոխվել Երևան և մինչ օրս՝ Հայրենական Մեծ պատերազմի մասնակից 100-ամյա վետերանը բնակվում է մայրաքաղաքում: Համատեղ ամուսնական կյանքում Գսպոյանները ունեցել են 4 երեխա, 12 թոռ և 28 ծոռ:

Վ.Գսպոյանը աշխատել է Հացամթերումների նախարարությունում որպես արտադրության բաժնի պետ, ապա Ծխախոտի գործարանում՝ որպես բրիգադիր, որից հետո աշխատել է Էլեկտրոցանցում որպես պահեստապետ:

Վոլոդյա Գսպոյանը պարգևատրվել է «Արիության համար»՝ 2 մեդալով, «Խիզախության համար»՝ 1 մեդալով, ինչպես նաև պարգևատրվել է Կարմիր աստղ 2-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով: Նա Բեռլինի մարտերին մասնակցելու համար ստացել է Ստալինի կողմից տրված շնորհակալագիր:

ԳԱՅԱՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ПАМЯТНОЕ МЕРОПРИЯТИЕ В ЕРЕВАНЕ, ПОСВЯЩЁННОЕ РУССКОМУ ДИПЛОМАТУ И ПИСАТЕЛЮ ГРИБОЕДОВУ

В Объединении ветеранов Республики Армения имени маршала И. Х. Баграмяна состоялось торжественное мероприятие, посвящённое 230-летию со дня рождения Александра Сергеевича Грибоедова – великого русского писателя, поэта, музыканта и выдающегося дипломата, сыгравшего важную роль в истории Армении и укреплении российско-армянских отношений.

В мероприятии приняли участие председатель Объединения ветеранов Армении С. Н. Есян, директор музея-заповедника Грибоедова «Хмелита» Н.В. Кулакова, заведующая кафедрой журналистики Московского государственного института культуры профессор Е.Ю. Коломийцева, старший научный сотрудник Института мировой литературы РАН М.В. Скороходов, временный поверенный в делах Республики Беларусь в Республике Армения И. Н. Кудрук, секретарь Посольства Российской Федерации в Республике Армения Д.С. Краснов, советник организации «Диалог» Е. А. Шуваева, а также известные историки, писатели и общественные деятели – А. В. Сафарян, В. Ф. Аветисян и др.

В Армении Грибоедова почитают не только как автора бессмертной комедии «Горе от ума», но и как дипломата, чья деятельность сыграла важную роль в укреплении добрососедских отношений и культурных связей между Россией и Арменией, а также в заключении Туркманчайского мира.

Программа мероприятия была насыщенной и познавательной. Прошла выставка «Грибоедов – русский

писатель и дипломат», рассказывающая о жизненном пути и многогранном таланте Грибоедова, о его миссии в Персии и Армении, о вкладе в укрепление дружбы между нашими народами.

Состоялась публичная лекция, посвящённая жизни и творчеству Грибоедова. Лектор Е.Ю. Коломийцева отметила роль писателя как мыслителя и просветителя, подчеркнув, что его идеи и сегодня сохраняют актуальность, служа делу взаимопонимания и сотрудничества между народами России и Армении.

Прошёл круглый стол «Два века комедии А. С. Грибоедова „Горе от ума“», в котором приняли участие исследователи из Института мировой литературы им. А. М. Горького РАН, Московского государственного института культуры, музея-заповедника «Хмелита», издательства «Вече» (Москва), а также студенты и школьники. Участники обсудили, как гениальное произведение Грибоедова продолжает откликаться на вызовы современности и сохраняет свою остроту и живую силу спустя два столетия.

Завершилось мероприятие памятной церемонией и возложением цветов к памятнику Александру Сергеевичу Грибоедову, расположенному на Кольцевом бульваре Еревана, – как символ признательности великому писателю и дипломату, жизнь и подвиг которого стали примером служения истине, культуре и миру.

АЛЁНА ДАНДИНА



ԳԵՆԵՐԱԼ – ՄԱՅՈՐ ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՂԱՋԱՆՈՎ

/Ծննդյան 120-ամյակի առիթով/

Սուրեն Հովհաննեսի (Իվան) Աղաջանովը ծնվել է 1905 թվականի դեկտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղի հինավուրց Ազոխ հայկական գյուղում, որը հարուստ է պատմամշակութային հուշարժաններով:

Նրա մանկության տարիներն անցել են գյուղական հասարակ միջավայրում: Երիտասարդ տարիքում ընտանիքի հետ տեղափոխվելով Բաքու՝ Աղաջանովը զուգահեռաբար սովորում էր և աշխատում նավթահանքերում՝ ամրացնելով իր կամքն ու ոգին:

1920թ. նա մեկնում է Մոսկվա և սովորում բանվորական ֆակուլտետ (բանֆակ), որը ԽՍՀՄ-ում գործող ուսումնական միավոր էր՝ ապահովելու գյուղական երիտասարդության նախապատրաստումը բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար:

1920 թվականից Սուրեն Աղաջանովն աշխատում է Գեորգիևսկ և Նալչիկ քաղաքներում, իսկ 1925 թվականին՝ Մոսկվայի «Յավա» ֆաբրիկայում:

1927թ. սովորում է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, ապա հաջորդ տարի նա անդամակցում է համամիութենական բոլշևիկյան կուսակցությանը:

1930 թվականին Աղաջանովը սովորում է Մոսկվայի ավիացիոն ինստիտուտում և դրանից հետո նա իր կյանքն ամբողջությամբ նվիրում է տեխնիկային, ինժեներությանը և հայրենիքին: Ավել ուշ՝ 1946 թվականից վարել է նույն ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ամբիոնը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին ու պատերազմի ժամանակ նրա ուսերին են դրվում հսկայական պատասխանատվություններ: Աղաջանովը նշանակվում է ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության գործարանների (Մոսկվայում, Տագանրոգում, Թբիլիսիում, Գորկիում) տնօրեն: Նրա ղեկավարած ձեռնարկություններում Մոսկվայից մինչև Տագանրոգ, Թբիլիսի ու Գորկի ստեղծվում էին թևավոր կործանիչներ, որոնք վճռական դերակատարություն էին ունենալու ռազմաճակատում:

Սուրեն Աղաջանովը 1942թ. սեպտեմբերի 24-ից մինչև իր կյանքի վերջը ղեկավարում է Գորկու Ս.Օրջոնիկիձեի անվան ավիացիոն գործարանը, որտեղ արտադրվում էին Լա-5, Լա-7, Լա-9 կործանիչները: Պատերազմի ընթացքում նրա շնորհիվ իրականացվել է արտադրության վերակառուցում և վերաձևակերպում, ինչը հնարավորություն էր տալիս ավելացնել ինքնաթիռների թողարկումը:

Համամիութենական սոցիալիստական մրցույթում ունեցած հաջողության համար գործարանը 25 անգամ արժանացել է առաջին կարգի մրցանակի և պարգևատրվել պետական պաշտպանության կոմիտեի փոխանցիկ Կարմիր դրոշով, որը պատերազմից հետո տեղափոխվել է գործարանի մշտական պահպանության համար:

Սուրեն Աղաջանովը Հայրենական Մեծ պատերազմի ռազմական գործողությունների հայազգի մասնակիցներից է: 1943 թվականին իր անմնացորդ նվիրվածության ու տաղանդի համար նա արժանանում է ճարտարագիտատեխնիկական ծառայության գեներալ-մայորի զինվորական կոչման, ինչպես նաև մի շարք պետական պարգևների՝ Լենինի, Կուտուզովի 1-ին աստիճանի, Կարմիր աստղի շքանշանների ու բազմաթիվ մեդալների:

Գեներալ-մայոր Սուրեն Հովհաննեսի Աղաջանովի թողած ժառանգությունը բարձր է գնահատվել Խորհրդային Միության ռազմարդյունաբերության մեջ: Նրա աշխատասիրությունը, խիզախությունը և հայրենիքի հանդեպ անսահման սերը վառ օրինակ եղան շատերի համար:

Ցավոք, Աղաջանովի կյանքը կարճ տևեց. նա վախճանվեց 1952 թ. դեկտեմբերի 16-ին Մոսկվայում և հուղարկավորվեց տեղի Պրեդբրաժենսկի գերեզմանատանը:

ՆՈՒՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտաշխատող

АЗАТАМУТ: ВОРОТА СВОБОДЫ И ПАМЯТИ

Асмик и Айкуи Кокобелян родились 19 декабря 2004 года в селе Азатамут города Иджеван. Получили среднее образование в школе имени Оганнеса Индияна села Каянаван. В 2023 году поступили на факультет гуманитарных наук Иджеванского филиала Ереванского государственного университета по специальности «Русский язык и литература».

С школьных лет участвовали в олимпиадах. В 11-м классе заняли третье место в номинации «Эссе» на фестивале русского языка и культуры. Уже будучи студентками, принимали участие в международных студенческих научно-практических и других конференциях, написали различные статьи и были награждены сертификатами. Также в 2025 году стали призёрами республиканской студенческой олимпиады, посвящённой 230-летию Грибоедова.

Азатамут... Само название нашего края звучит как молитва — «Ворота свободы», стоящие на самой границе Армении и Азербайджана. Но какая это свобода, если почти всегда здесь было тревожно и беспокойно? Даже в те годы, которые называли мирными, люди жили ожиданием опасности. А когда грянула Великая Отечественная война, в эту страшную мясорубку попали и жители нашего маленького села.

Из Армении на фронт ушло около пятисот тысяч человек. А из нашей деревни — от двадцати до ста. Цифры кажутся сухими, но за каждой из них стоит жизнь, сердце, мечта, чья-то улыбка и чьи-то слёзы.

В сердце Азатамута возвышается памятник, как каменный страж памяти. Он создан из светлого камня, характерного для армянской традиции, и уже сам по себе выглядит как символ света и надежды. В центре высечен вертикальный меч, остриём вниз — знак жертвы, защиты и стойкости. Вокруг меча — венок, как вечная дань славе и памяти павших. Орнаменты, цветы и геометрические узоры, словно вплетённые в ткань армянского хачкара, оживают на поверхности монумента, придавая ему неповторимое тепло и душу.

Постамент строгий и прямоугольный, без лишних украшений, что делает памятник торжественно сдержанным. Он стоит на бетонной площадке, а за ним раскинулся зелёный пейзаж: деревья и поле придают всей композиции ощущение вечности и спокойствия.

Перед этим памятником собираются жители: старики, хранящие в памяти дни войны, и дети, впервые слышащие истории о том, как из их маленького села на фронт ушли десятки людей. Одни вернулись с ранами и воспоминаниями, которые преследовали их всю жизнь, другие навсегда остались там, на полях сражений.

Много лет прошло, но памятник стоит, как немой рассказчик. Он говорит без слов: «Здесь живут люди, которые знают цену миру. Здесь помнят тех, кто отдал жизнь ради будущего». И каждый, кто останавливается перед этим камнем, видит не просто историю войны, а историю маленького села, которое стало частью великой Победы.

У нас в деревне есть особая традиция — улицы названы именами героев. Идешь по ним, и каждый шаг напоминает: здесь жила семья, которая отдала самое дорогое ради Победы. Вот улица Антоняна Ашота, вот — Самсона Апиняна, вот — Роберта Геворгяна...

Наша улица носит имя Самсона Апиняна. Он был танкистом. Представьте молодого парня, которому всего-то двадцать с небольшим лет, и он сидит за рычагами огромной боевой машины. Его глаза смотрят вперёд, в огонь и дым, и в сердце его только одно — не подвести свою землю. Он погиб прямо в танке, не оставив его до последнего дыхания. Сгорел в бою, но остался в памяти как герой, который до конца был верен своей присяге. Мы, дети этой улицы, каждый день идём по дороге, которая хранит его имя, и будто слышим отдалённый гул танкового двигателя — отзвук его мужества. Но война — это не только история улиц, это история каждой семьи.

Моя семья тоже внесла свою кровавую лепту в Победу. Со стороны моей мамы в войну ушёл мой прапрадед — Вардеван Алавердян.

Он родился в 1888 году в тихом селе Ачаджур, в простой крестьянской семье. С детства жизнь закаляла его: он помогал родителям в поле, учился заботе о семье и уважению к людям. Уже тогда проявлялась его внутренняя сила и стремление защищать близких.

Весна 1918 года. Армянская земля стонала под грохотом пушек. С юга наступал враг, и казалось, что всё потеряно. В те страшные дни, когда судьба народа висела на волоске, тысячи простых людей взяли в руки оружие. Среди них был и Вардеван — молодой парень из простой семьи, с горячим сердцем и чистым взглядом.

Он не был солдатом по профессии. Он просто не мог остаться в стороне. Когда братья Пирумовы создали свой добровольческий отряд, Вардеван пришёл к ним без колебаний. Он понимал: если не встанет сейчас — завтра не будет Родины.

Под Баш-Апараном шли тяжёлые бои. День и ночь, под дождём и огнём, отряд Пирумовых сдерживал врага. Пули свистели, земля горела, но Вардеван не отступал.



Он помогал раненым, делился последней водой, шептал товарищам: «Держитесь, братья, за нами Армения...»

Их отвага спасла страну. Битва под Баш-Апараном вошла в историю как символ мужества и единства. Вардеван вернулся домой — не как герой, а как человек, который просто сделал то, что должен был.

Ещё до участия в Великой Отечественной войне он посвятил Родине 9 лет своей жизни: служил, охранял границы и помогал укреплять порядок в родном крае. Соседи и товарищи уважали его за честность, трудолюбие и готовность всегда прийти на помощь. Вардеван говорил: «Служить Родине — значит защищать тех, кого любишь».

В 1938 году его судьба приняла суровый поворот — его, вместе с другими, отправили в Сибирь. Это были тяжёлые годы: бескрайние просторы, пронизывающий холод, долгие и опасные дороги. Но, несмотря на лишения, он не сломался. Вардеван помогал товарищам, поддерживал их морально и хранил веру, что всё испытание имеет смысл.

Когда началась Великая Отечественная война в 1941 году, он уже был не молод, но снова встал в строй. «Я уже видел, как гибнет Родина, — говорил он, — и не позволю, чтобы это повторилось».

На фронте он проявил беспримерную храбрость. Молодые бойцы тянулись к нему — к человеку, который уже однажды победил страх. Его уважали, к нему прислушивались. Он сражался за каждый дом, помогал раненым, поддерживал товарищей. Часто вспоминал Апаран — зелёные холмы, друзей, которых потерял. И повторял: «Свобода — не дар, её нужно заслужить».

Прапрадед писал короткие письма семье, которые доходили через трудности и блокпосты фронта. В них он писал о простых вещах: как скучает по дому, по любимой земле, о том, что верит в Победу и мечтает снова увидеть родное село. Эти письма стали для семьи сим-

волом надежды и любви, несмотря на ужас войны.

К сожалению, Вардеван Алавердян не вернулся домой. Он отдал жизнь за свободу и мир, а его могилу до сих пор не нашли. Но память о нём живёт в сердцах потомков. Мы рассказываем его историю детям, гордимся его мужеством и самоотверженностью. Он остался для нас примером настоящего героя — человека, который всю жизнь служил Родине, был готов жертвовать собой ради других и никогда не терял веры в добро и справедливость.

Память о нём — это свет, который освещает нашу семью и напоминает, что настоящая сила человека проявляется не только в победах, но и в любви к Родине, в готовности стоять за тех, кого любишь, несмотря ни на что.

Когда мы думаем о нём, нам кажется, что он стоит рядом с Самсоном Апиняном, Антоном Антоняном, Робертом Геворгяном и со всеми другими героями. Их имена разные, их судьбы разные, но у них одно общее — они ушли ради того, чтобы мы сегодня жили, чтобы Азатамут продолжал называться «Воротами свободы».

И каждый раз, проходя мимо памятника или шагая по нашей улице, мы понимаем: память жива, пока мы о ней говорим. Пока мы рассказываем о тех, кто не вернулся. Пока мы помним о Вардеване Алавердяне, который отдал всё, что имел, и даже больше.

Герой войны — это не просто имя в истории, это человек, который жил, любил, мечтал и отдал жизнь за других. Наш прапрадед, как и тысячи других, защищал Родину, не думая о себе. Каждый день его служения, каждая минута на фронте были наполнены смелостью, честью и верой в будущее. Мы храним его память в сердцах, рассказываем детям о его подвиге и гордимся тем, что среди наших предков был настоящий герой. Пусть его пример учит нас любить Родину, быть сильными и ценить мир.

АЙКУИ И АСМИК КОКОБЕЛЯН



ՀԱՅ ԶԻՆՎՈՐ-ՀՐԱՍԱՆԱՏԱՐԸ

(Գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի
ծննդյան 105-ամյակի առթիվ)

«Ոգու մարդուն վայել չէ նվաստանալ անգամ իր Աստծու առջև»...

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵԽ

1992 թվականն էր... Չունեինք կուռ, վարժեցված բանակ, չունեինք զենք, զինամթերք և համապատասխան մասնագետներ, բայց ունեինք հայրենասիրական ոգով տոգորված կամավորականներ, ինքնագործ ու աննկուն ազատամարտիկներ:

Քրիստափոր Իվանի Իվանյանը, լինելով Խորհրդային բանակի հրետանու գեներալ, ունենալով ռազմական հիմնավոր ու խորը գիտելիքներ, որոնք ստացել էր ԽՍՀՄ առաջնակարգ ռազմական ակադեմիաներում, և Երկրորդ աշխարհամարտում ձեռք բերելով պատերազմի փորձ, շատ զարմացավ, երբ տեսավ, որ մեր կամավորականները, ովքեր անվրեպ կրակում էին և խոցում թշնամու դիրքերն ու տեխնիկան, չէին տիրապետում հրետանավորի մասնագիտությանը, չունեին համապատասխան գիտելիքներ և չէին կարողանում տարրական հաշվարկներ կատարել...

Շատ վշտացավ, բայց լինելով խորաթափանց, հմուտ, բանիմաց ու պատասխանատու անձնավորություն, անցավ գործի՝ հենց դիրքերում ուսուցանելու զինվորին. չէ որ այլևս ժամանակ չկար, պատերազմ էր, բոլոր գիտելիքներն ու վարժանքները փորձարկվում էին հենց տեղում՝ թշնամու ուղղությամբ:

Այսպես, Քրիստափոր Իվանյանը 72-ամյա հասակում կրկին հայտնվեց ռազմաճակատում, երբ պատերազմող մեր երիտասարդ հանրապետության գոյատևման ամենածանր ու ճակատագրական պահն էր, երբ պարտադրված պատերազմում ոսոխը քայլ առ քայլ առաջանում էր հայոց հողում՝ առջևում ունենալով Խորհրդային բանակի վարձկան մնացուկներին՝ իրենց մեծաքանակ տանկերով, գերձայնային ռմբակոծիչներով ու այլ զինատեսակներով:

Նա անցել էր պատերազմի բոլոր ճակատներով՝ հասնելով մինչև երկար սպասված զինադադարը, որին հենց առաջին օրվանից դեմ էր այդ հեռատես ու իմաստուն հայը, փոխարենը պահանջում էր ստիպել թշնամուն անվերապահ կապիտուլյացիայի: Դժգոհ էր, համարում էր, որ դեռևս լիարժեք չի կատարել իր իսկ առջև դրված խնդիրը՝ վերջնականապես ջախջախել թշնամուն: Ցավոք, նա անգոր էր քաղաքական տարատեսակ խաղերում...

Շատ բան էր տեսել հրամանատարը, հաղթանակի բերկրանքը դեռևս երիտասարդ տարիներին էր ճաշակել: Իվանյանը երբևէ չէր մտածում կոչման ու պաշտոնի մասին: Անկեղծ, անմիջական, չափազանց համեստ անձնավորություն էր և կյանքի իմաստը տեսնում էր ազնիվ ապրելու մեջ: Նա համոզված էր, որ պատմությունը երբևէ գնահատելու է նման որակներով օժտված անհատներին:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ 22 տարեկանում, նրան առաջին անգամ զորամաս վստահվեց՝ ղեկավարելու Հյուսիսկովկասյան կազմում գտնվող 195-րդ լեռնաականանետային գունդը: Դա չափազանց ծանրակշիռ վստահություն էր, որը պատվով կատարեց երիտասարդ ու խիզախ հրամանատարը: Նա բազմիցս վիրավորումներ ստանալուց հետո ևս շարունակեց ղեկավարել ճակատամարտը՝ մեծ կորուստներ պատճառելով հակառակորդին:

Պատերազմի ավարտից հետո էլ իր անզիջում բնավորության պատճառով, շուրջ քառորդ դար, նա ասես հաստիքային տեղապտույտի մեջ լինեք. անընդհատ նշանակվում էր դեռևս պատերազմի տարիներին ծառայած պաշտոններին: Գեներալ-մայորի կոչումն էլ Կովկասյան լեռնաշղթայից մարտերով մինչև Չեխոսլովակիա հասած, եռանդուն հրամանատարը նախորդ կոչումից քսաներկու տարի անց ստացավ: Ասում էին, թե դրա համար ծանրակշիռ պատճառներ կային...



Առաջին պատճառը նրա ամուսնությունն էր, երբ պատերազմից հետո նա ընտրեց ստալինյան ճամբարներում գնդակահարված դիվիզիայի հրամանատարի դստերը: Դրա համար նրան չաքտորեցին, բայց ուղղակի նկատի ունեցան:

Հաջորդ հարվածը չուշացավ. երբ զորավարության ժամանակ զինվոր զոհվեց, նա արդյունքների ամփոփման համար ձայն խնդրեց ու բոլորի ներկայությամբ զորքերի հրամանատարին ասաց, թե՝ «Դու ի՞նչ զինվորական ես, որ տարրական բաներ չուզեցիր հասկանալ, հրամանատարների առարկությունները չլսեցիր և վերններին հաճոյանալու, կեղծ արդյունքների մասին գեկուցելու համար զինվորին սպանեցիր»:

Դրանից անմիջապես հետո ստեղծված հատուկ հանձնաժողովը պարզել էր, որ զինվորի մահվան համար գլխավոր «մեղավորը» գնդապետ Իվանյանն է: Նրան աստիճանագրեցին, և նա նորից սկսեց կրել պատերազմի ահեղ տարիներին՝ 23 տարեկանում վաստակած փոխգնդապետի ուսադիրները:

Սակայն այս թնջուկը երկար չշարունակվեց: Մի քանի ամիս անց եկավ ԽՍՀՄ պաշտպանության նախարար, մարշալ Անդրեյ Գրեչկոյի կողմից ստորագրված հրամանը Քրիստափոր Իվանյանի զինվորական կոչումը ոչ թե վերաշնորհելու, այլ վերահաստատելու մասին: Ուկրաինայի և Չեխոսլովակիայի ազատագրման ժամանակ առաջին գվարդիական բանակը ղեկավարած մարշալը չէր մոռացել պատերազմի երիտասարդ ու լեգենդար հրամանատարին:

Գեներալի կոչում չստանալու հաջորդ պատճառը պարզից էլ պարզ էր. այն օրակարգից առժամանակ դուրս էր եկել: Շուրջ

տասը տարի Օդեսայի հատուկ զինվորական օկրուգում ծառայելուց հետո նա մի անգամ մարշալ Համազասպ Բաբաջանյանին հարցրեց, թե դեռ երկար է գեներալական ուսադիրների սպասելու, և նույնքան անկեղծ պատասխան ստացավ. «Իվանյա՛ն, այս երկրում ընդունված չէ, որ հայը հային գեներալի կոչման ներկայացնի»:

Ի վերջո, տասներկու տարի անց մեծանուն ու փառահեղ ուղի անցած հրամանատարին գեներալ-մայորի կոչում շնորհվեց: Շատերն էին սպասում, որ եռանդով լեցուն Քրիստափոր Իվանյանը շուտով գեներալ-լեյտենանտի ուսադիրների էլ կարժանանա: Սակայն այդ առիթը ստեղծվեց միայն հինգ տարի անց՝ 1973թ.:

Մի օր գեներալ-մայոր Իվանյանի մոտ եկան պատասխանատուներ Խորհրդային Միության Կենտրոնական կոմիտեից և խնդրեցին ստորագրել Հյուսիսկովկասյան ռազմաճակատի 18-րդ բանակի քաղղեկ Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի՝ Կերչի ազատագրման գործողություններում կատարած հերոսական ծառայության մասին պատմող բավական ծավալուն հոդվածը՝ փոխարենը խոստանալով առավել բարձր պաշտոն՝ Մոսկվայում կամ Լենինգրադում: Անդրդվելի հայը, բնականաբար, հրաժարվեց ստորագրել այն և մնաց իր սկզբունքներին հավատարիմ՝ ասելով, որ նման մարդու չի ճանաչում, ճանաչում է թիկունքի քաղբաժնի պետ Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին և, որ նա պատերազմի օրերին երբեք ծովը չի անցել, այլ միայն նկարվել է հերոս դեսանտայիների հետ: «Չէ որ եթե ստորագրեի, իմ մարտական ընկերներն ինչ կմտածեին իրենց հրամանատարի՝ իմ մասին. որ պատերազմում հաղթելուց հետո խաղաղության ժամանակ պարտվեցի...»:

Հաջորդ հրամանը չուշացավ՝ 58-ամյա գեներալն ուղարկվեց թոշակի...

Ոգու մարդուն վայել չէր նվաստանալ կուսակցական խարդավանքներ հյուսողների առջև... Նրա կյանքի ուղին ապացուցում է, որ իսկական հերոսները ոչ միայն մարտադաշտում են կոփվում, այլև իրենց գործով ու նվիրումով անմահանում են պատմության մեջ:

ԳՈՒՆԻՋԱՐ ՀԱՎՈՐՅԱՆ

ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտաշխատող

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ԴԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՎԵՏԵՐԱՆ ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Սուրեն Գրիգորի Ղումաշյանը ծնվել է 1925թ. դեկտեմբերի 29-ին Լոռու մարզի գյուղ Մարգահովտում (Նախկին անվանումները՝ Բոսգեղ, Համզաչիման, Թագավորանիստ), բանվորի ընտանիքում: Հայրը՝ Գրիգոր Ղումաշյանն ու մայրը՝ Լիլիփար Ղազարյանը ունեցել են ութ երեխա: Ավագ երեխան Սուրեն Ղումաշյանն է: Նա իր սկզբնական ուսումը ստացել է իր ծննդավայրում՝ Մարգարտահովտի դպրոցում: Ավարտելով 8-րդ դասարանը սկսել է աշխատել գյուղում որպես փոստատար: Ղումաշյանը փոստատարին զուգահեռ աշխատել է նաև գյուղի անասնաբուժարանում որպես անասնաբուծի օգնական:

Հայրենական Մեծ պատերազմը սկսվելուն պես գյուղի անասնաբուծը զորակոչվել է և մեկնել պատերազմի դաշտ: Սուրենը թողնում է փոստատարի աշխատանքը և զբաղվում է միայն անասնաբուծությամբ:

Սուրեն Ղումաշյանն աշխատում է մինչև 1943 թվականը և 18 տարին դեռ չլրացած մեկնում պատերազմ: Մեկ ամիս ծառայում է Դիլիջանում, այնուհետև բեռնատար գնացքով մեկնում Ուկրաինա, որտեղ ծառայում է առաջին Ուկրաինական ճակատում: Մարտնչելով հասնում են մինչև Լեհաստան: 1944թ. փետրվարի 29-ին Սուրեն Ղումաշյանը աջ ոտքից ստանում է հրազենային վիրավորում: Նրան տեղափոխում են Սիզրան քաղաք ուր մինչև մայիս ամիսը նա ստանում է իր բուժումը և ապաքինվելուց հետո զորացրվում է բանակից:

Հայրենիք վերադառնալուց և ևս երկու տարի բուժում ստանալուց հետո Սուրեն Ղումաշյանը տեղափոխվում է Լեռնոնտովո համայնքի այժմյան Անտառաշեն գյուղ, որտեղ հիմնադրում է Մոսկվայի ենթայաությամբ գործող կենդանաբուժական սովխոզ: Ղումաշյանը աշխատում է որպես ֆերմայի վարիչ, հնարավորություն է ունենում կենդանիներ ներմուծել ֆերմա էստոնիայից:

Ղումաշյանը հանդիսացել է գյուղի կուսակցական կազմակերպության քարտուղարը, ընտրվել է տեղական շրջանային սովետի դեպուտատ: 1947թ. նա ամուսնանում է Հերիքնազ Խալաթյանի հետ, ունենում են հինգ



երեխա: 1976 թվականից սկսած մինչև 1995թ. Ս. Ղումաշյանը աշխատել է ֆերամայում որպես պահեստապետ:

2002թ. Սուրեն Ղումաշյանի ընտանիքը տեղափոխվում է Վանաձոր, որտեղ և ապրում են մինչ օրս՝ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասի 2-րդ փողոցի համար 5 տանը:

ԳԱՅԱՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ